

ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա
Արևելագիտության ինստիտուտ

National Academy of Sciences
Republic of Armenia
Institute of Oriental Studies

Երիտասարդ Արևելագետների
Հանրապետական XIX գիտական
նստաշրջան
Ձեկուցումների թեզեր

XIX Conference of Young Orientalists of
Armenia
Theses

ԵՐԵՎԱՆ - 1998 - YEREVAN

ԱՔՐԱՀԱՄՅԱՆ ՆՈՒՆԵ (ԵՊՀ)

ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ԽՆԴԻՐԸ
ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԵՂԾՄԱՆ ԵՎ
ԱՐԱՔԱ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1
A II 84821

Եթե Իսրայելի պետության հռչակումը համարենք արաբ-խաբայեցյան հակամարտության ֆորմալ սկիզբը, ապա այս տարի ճշանակալորվում է սույն մերձավորարևելյան խնդրի 50 տարին: Կեսդարյա հեռավորությունը արդեն դասական բնույթ է հաղորդել խնդրին այն իմաստով, որ դրան վերաբերող բազմաթիվ հարցեր արդեն համակողմանիորեն ուսումնասիրված են: Բայց և միաժամանակ խնդիրը չի կորցրել իր հրատապությունը և առայժմ լուծված չլինելով՝ ստիպում է հերթական անգամներ անդրադառնալ դրան, քանի որ այս խնդրի ուսումնասիրությունը մի ստույգ միջոց է՝ հասկանալու այժմ մերձավորարևելյան տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացները: Եթե փորձենք քվարկել այն խնդիրները, որոնց լուծումից է կախված առաջընթացը խաղաղության գործընթացում, այն է՝ ջրի պրոբլեմ, զբաղված տարածքների խնդիր, պաղեստինցի փախստականների, անվտանգության խնդիրներ, ապա կնկատենք, որ Երուսաղեմ քաղաքի ու նրա կարգավիճակի հարցը ամենից շատ է համապատասխանում վերը ճշված բանաձևին, այն է՝ Երուսաղեմի կարգավիճակի հարցը նույնքան հին է, որքան արաբ-խաբայեցյան հակամարտությունը, մյուս կողմից՝ այն ստավել քան արդիական է: Բավական է միայն հիշել, որ Երուսաղեմի արևելյան մասում հրեա վերաբնակիչների համար նոր բնակավայրերի կառուցումը կամ դրա դադարեցումը այն ազդանշաններից մեկն է, որ ճշանակալորում է արաբների ու հրեաների միջև բանակցությունների վերսկսումը կամ դադարեցումը:

Ուսումնասիրության նպատակն է անդրադառնալ 1947թ. նոյեմբերի 29-ի՝ Պաղեստինի բաժանման և Երուսաղեմ քաղաքի միջազգայնացման մասին ՄԱԿ-ի որոշման ընդունման պահից մինչև 1948թ. մայիսի 14-ը, այն է՝ Իսրայելի պետության հռչակումը, և Երուսաղեմում ակտիվ ռազմական գործողությունների սկզբի միջև ընկած ժամանակաշրջանին՝ փորձելով

պարզել, թե որքանով էր ՄԱԿ-ի 181/21 որոշումը համապատասխանում տարածաշրջանում առկա ուժերի բաժանմանը, որքանով էր արտացոլում Պաղեստինի արաբ և հիւսն ժողովուրդների շահերը, անդրադառնալ այս ընթացքում Երուսաղեմի շրջանում հրեաների և արաբների կողմից իրականացված այն գործողություններին, որոնք էապես ազդել են տարածաշրջանի էթնիկական պատկերի վրա՝ փոխելով այն, քաղաքական ուժերի վերադասավորման վրա՝ կարևորելով նաև այն հանգամանքը, որ այս ժամանակաշրջանը, որը չափազանց մեծ կարևորություն ունի և պայմանավորել է իրադարձությունների հետագա զարգացումը տարածաշրջանում, հիմնականում անտեսվել է խորհրդային պատմաբանների կողմից:

ԱՆՏՈՆՅԱՆ ՅՈՒԼԻԱ (ԵՊՀ)

*ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐՔԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ՈՐՈՇ ԱՌԱՄՊԵԼԱՐԱՆԱԿԱՆ
ՄՈՏԻՎՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

1. Հայկական վարքագրական և փկայագրական գրականությունը հատուկ քննության լույսի ներքո հանդես է գալիս որպես հայ միջնադարյան առասպելա-կրոնական պատկերացումների առանձնահատուկ ու հետաքրքիր աղբյուրներից մեկը:
2. Տվյալ ենթատեքստում առավել կարևոր է դառնում այն նյութը, որը մեզ պատկերացում է տալիս քրիստոնեական և հեթանոսական /ինչպես բուն հայկական, այնպես էլ ընդհանուր արևելյան/ հավատալիքների, աշխարհահայացի մասին:
3. Հնարավորություն չունենալով առասպելա-կրոնական պատկերացումների բոլոր դրսևորումների վրա կանգ առնելու՝ մենք կդիմենք մասնավոր դեպքերի հետազոտմանը: Առաքել Դավրիժեցու «Պատմության» դրվագներից մեկում կարողիկոս Փիլիպոսի կյանքի ու վարքի նկարագրման ընթացքում ներկայացվում է մի քանի հետաքրքիր դրվագ կարողիկոսին

շնորհված բուժման ունակության մասին: Այդ հատկությունը հանդես է գալիս հայ սրբերից, նահատակներից շատերի վարքագրության մեջ, սակայն ինքը՝ բուժման պրոցեսը շատ քիչ տեղերում է նկարագրված ամենայն մանրամասնությամբ:

4. «Դիվանհար» կամ «այսահար» միաբանի բուժման մասին հատվածը պարունակում է իր իսկ՝ միաբանի վկայությունը բուժման ընթացքի մասին: Չարը /շար ոգին/, որ տանջում է միաբանին, նկարագրվում է որպես «սեսագին սև վիշապ օձ», որը պատել էր նրա մեջքը, պարանոցը և ամբողջ մարմինը, իսկ կաթողիկոս Փիլիպոսը հանդես է գալիս քաջ վիշապամարտիկի տեսքով, որը «խիստ մեծ, մերկ սուսերով» զարկում է վիշապ օձին, կտրատում նրան և ազատում ցավազար միաբանին:

5. Կաթողիկոս Փիլիպոսի վարքագրությունը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում մաս նրա կյանքի մասին, որոնցից կոտակում է մի կառուցվածք, մի սխեմա, որը որոշ չափով նմանվում է բուժող շամանների կյանքի սիմվոլիկ ընթացքին՝ իրեն հատուկ հիմնական էտապներով /փորձանք, ինձիցիսցիա, հզոր նախորդի փոխարինում, հրաշագործություններ/:

6. Այսպիսով, ակնհայտ է, որ կաթողիկոս Փիլիպոսի կերպարի մեջ միահյուսվում են բուժող հզոր շամանի և վիշապամարտիկի կերպարները:

7. Վիշապամարտի մոտիվը խորը հնությունից է գալիս և ներկա է գրեթե բոլոր առասպելաբանական համակարգերի մեջ: Այն հանդիպում ենք ինչպես աստված-վիշապամարտիկի մակարդակով /Հայաստանում՝ Վահագն, այլ դիցաբանական համակարգերի մեջ՝ Ռամ, Մեթին սպանող Գռոք, Ապոլոնը և այլն/, այնպես էլ վիշապին սպանող հեքիաթների և էպիկական ստեղծագործությունների հերոսի տեսքով: Նույնիսկ չխորանալով կերպարի առասպելաբանական և նշանաբանական ստանձնահատկությունների մեջ՝ կարելի է հատուկորեն եզրակացնել, որ Առաքել Դավիթիժեղ ժամանակներում սպարած /17դ./ կաթողիկոսի, որպես քրիստոնեական առաջնորդի կերպարի մեկնաբանման և առասպելաբանական հնագույն պատկերացումների միջև պետք է գոյություն ունենա անցման շրջան, երբ պետք է կայանար կերպարի սրամարմանական զարգացումը:

8. Վիշապամարտիկի կերպարը քրիստոնեության մեջ մտավ հետաքրքիր առասպելա-կրոնական գույգործումների միջոցով, վաղ քրիստոնեության

Ժամանակաշրջանում, երբ քրիստոնեության ծիսակարգի և աշխարհահայացք ձևավորումն էր տեղի ունենում: Այն առավել վառ արտահայտվեց Սբ. Գեորգ Հաղթակիթի և մի շարք պաշտպանող սրբերի կերպարների մեջ: Վիշապամարտի տարբը պարունակող քրիստոնեական սրբի կերպարը լայն տարածում է գտել Արևելյան Հռոմեական Կայսրության տարածքում և հետագայում, իսաչակրաց արշավանքների միջոցով քափանցեց նաև եվրոպական երկրներ: Ժողովրդական մակարդակով՝ այդ կերպարը միաձուլվեց բնամիներեից պաշտպանող, հաճում հավատքի պայքարող զինվորի հետ, որին վերագրվում է նաև վիշապամարտիկի դերը, ինչը երևում է , օրինակ, բյուզանդական էպիկական երգերում:

9. Այդ երկու երևույթները՝ պայքար հաճում հավատքի, որը քեկուզ սինվոլիկ կերպով, սակայն միշտ ուղեկցում է քրիստոնեական առաջնորդի կերպարը, և հաճում հավատքի պայքարող զինվորների վերագրվող վիշապամարտիկի հատկությունները դառնում են շաման - բուժողի հատկությունների մի մասը կաթողիկոս Փիլիպոսի կերպարում:

10. Այսպիսով, ունենալով ժողովրդական պատկերացումների վերջնական արդյունք, մենք փորձում ենք վերծանել միջնադարյան ժողովրդական մտածելակերպին յուրահատուկ որոշ գործընթացներ:

ԲԱԼՅԱՆ ՎԱՐԴԱՆ (ԵՊՀ)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՈԴԵՌՆԻԶԱՅՄԱՆ

ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈՐՉԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1960-70-ական քվականներին Իրանում շահական վարչակարգի կողմից իրականացվում էին արդիականացման լայնածավալ ծրագրեր, որոնք պատմության մեջ հայտնի են «սպիտակ հեղափոխություն» անվամբ: Պետք է նշենք, սակայն, որ վերոհիշյալ գործընթացը կրում էր գերազանցապես կառուցվածքային բնույթ և առավելապես ուղղված էր ժամանակակից հասարակությանը քնորոշ սոցիալ-տնտեսական ինստիտուտներին

ձևավորմանը: Մոյն նպատակի իրականացման համար վարչակարգի ձեռնարկած սոցիալ-տնտեսական վերափոխումների թվում, ըստ այդմ, կարելի է նշել ներքոգրյալները:

- 1) արդյունաբերականացումը (ինդուստրացում);
- 2) ժամանակակից շուկայական կապիտալիզմի ձևավորում;
- 3) քաղաքայնացում (ուրբանիզացիա);
- 4) գրագիտության տարածում;
- 5) գրավածության կառուցվածքի արմատական փոփոխություն;
- 6) հասարակության սոցիալական տարաբաշխվածության փոփոխում;
- 7) սոցիալական մոբիլության ծավալների և ինտենսիվության ավելացում:

Այս առումով նշենք, որ արդիականացումն ընդհանրապես ենթադրում է արդիականացված հասարակության կառուցվածքում սոցիալական և քաղաքական մոբիլիզացիայի ինստիտուտների լայն համակարգի բյուրեղացում: Նման համակարգի գործունեությունը նպատակ ունի՝

- 1) մոբիլիզացնել առկա հասարակական ներուժը;
- 2) էապես փոփոխել քաղաքացիների սոցիալական և քաղաքական վարքագիծը:

Այս համատեքստում, փաստորեն, արդիականացումը հանդիսանում է նոր հասարակության և ազգի ձևավորման տեխնոլոգիա: Ըստ որում նշենք, որ արդիականացման գործընթացը ժամանակակից աշխարհում սկսվել է շուրջ 200 տարի առաջ և այսօր մեծապես կանխորոշում է համայն աշխարհի հասարակական զարգացումը, քանի որ հասարակական կառուցածի արդիականացումն ակնառու անհրաժեշտություն է: Ուստի և այն պետությունները, որոնք զարգացման առումով ինչ-ինչ պատճառներով ետ են մնացել հասարակական հարաբերությունների կարգավորման քաղաքակիրթ մեխանիզմ ռեկոնստրուկցիայի արևմտյան երկրներից, ձգտում են հնարավորին չափ կարճ ժամկետներում լրացնել այդ բացը՝ նախընտրելով ժամանակակից աշխարհում ընդունված, արդիականության չափանիշներին առավելապես համապատասխանող արևմտյան մոդելների ուղղակի պատճենման ուղին: Ըստ որում, համամարդկային պատմությունը կոնկրետ օրինակներով բազմիցս փաստել է մնալ ուղա անարդյունավետությունը և

տվյալ հասարակությանը սպառնացող քաղաքական և տնտեսական ծանր հետևանքների անխուսափելիությունը, որոնք կարող են հանգեցնել հասարակության բարոյական դիմագծի կորստի և ազգային ինքնագիտակցության ճգնաժամի:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ սոցիալ-քաղաքական արդիականացման առավել արդյունավետ միջոց կարող է հանդիսանալ ֆորմալ ուսուցումը: Իրանական և համաշխարհային պրակտիկան այս առումով փաստում են, որ բազմաթիվ հասարակություններում, որտեղ մոդեռնիզացման գործընթացը իրականացվում է սեղմ ժամկետներում, ստեղծվում է մի վիճակ, երբ չափահաս բնակչության մեծամասնությունը փոփոխված հասարակական պայմաններին ադապտացվում, հարմարվում են՝ շրջանցելով ֆորմալ ուսուցումը: Ըստ որում, նման կարգի ադապտացումը մշտապես մոդեկցվում է «հնի ու նորի» պայքարով, որ երբեմն վերաճում է անհաշտ հակամարտության, ինչը հղի է քաղաքական և տնտեսական ծանր հետևանքներով: Նման իրավիճակից թերևս կարելի է խուսափել միայն այն պարագայում, երբ հասարակական արդիականացման գործընթացում կիրառվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք որպես սոցիալ-քաղաքական մոդեռնիզացման առավել արդյունավետ միջոց դիտում են ֆորմալ ուսուցումը: Մնացած բոլոր դեպքերում շատ դժվար կլինի խուսափել հասարակական կառուցակարգի ցնցումներից և որպես արդյունք՝ հեղափոխությունից:

ԲՈՐՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ (ՀԱԻ)

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԾՈՓՔՈՒՄ

Մ.Թ.Ա. 3-ՐԴ ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ ՎԵՐՋՈՒՄ

Քաղաքային կյանքի սաղմերը Ծովքում առկա են դեռ ներկայումս: Դրանք հատկապես ցայտուն են արտահայտվում մ.թ.ա. 4-րդ հազ. վերջում, իսկ 3-րդ հազ. վերջում կարելի է արդեն խոսել տիպիկ քաղաքային միջավայրի մասին:

Մ.թ.ա. 3-րդ հազ վերջում Շոփրի քաղաքային կյանքը զարգանում էր կուր-արարքայան մշակույթի սահմաններում՝ անատոլիա-սիրիական աշխարհի ակնհայտ ազդեցության ներքո: Միևնույն ժամանակ այստեղ տեսանելի են մշակութային տեղական առանձնահատկություններ, որոնք հատկապես արտացոլված են բնորոշ գունագարդ խեցեղենի մեջ:

Այս ժամանակաշրջանում աճում է բնակավայրերի քանակը: Շոփրում և նրան մշակութապես հարազատ Փոքր Հայքի հարակից շրջաններում հայտնի են 30-ից ավելի բնակավայրեր՝ իրենց բնորոշ հիերարխիայով: Դրանց թվում առանձնացվում են մեծ քաղաքներ (Նորշուն՝ 800x600, Զորուջու՝ 500x300), փոքր քաղաքներ (Թեփեջիք՝ 300x200), ավաններ (Դեղիքմեն՝ 106x150, Աղվան-կալե՝ 125x95): Տարածքը եղել է խիտ բնակեցված, քաղաքները՝ բազմամարդ (Նորշունում ենթադրվում է մոտ 5000 բնակչություն): Այստեղ թերևս առկա է քաղաք-պետությունների համակարգը (Նորշունը, հավանաբար, եղել է մայրաքաղաք):

Շոփրի բնակավայրերում հաստատագրված են մոնումենտալ ճարտարապետության հետքեր: 3-րդ հազ. 2-րդ քառորդում Նորշունը և Թեփեջիքը, իսկ ավելի ուշ՝ նաև Արսլանթեփեն պարսպապատվում են: Նորշուն VI-ում հայտնաբերվել է պալատական համալիր կազմված տնտեսական, խոհանոցային և բնակելի սենյակներից: Չորս խոշոր շինություններից ամենամեծը ունեցել է 4 մասան՝ 98 կարասով: Սա համապատասխանում է ավելի ուշ՝ խեթական տեքստերի հաղորդմանը, ըստ որի Շոփրում (Իշուվա) գտնվել է E. LUGAL (պալատ, ռեզիդենցիա)՝ տարածաշրջանի դատա-վարչա-տնտեսական կենտրոնը: Ներշունում, Թեփեջիքում, Դեղիքմենում, Հան Իբրահիմ Շահում և այլուր տարածված են մեկ սենյականոց, ուղղանկյուն հատակագծով երկհարկանի տներ: Զաղաքներն ունեցել են փողոցներ (Նորշունի փողոցի լայնությունը 2-3,5մ. է): Քաղաքային ճարտարապետությունը բնորոշ էր կենտրոններին, իսկ գյուղերում՝ գերիշխում էին խիտ ու ազլոմերառիվ շինությունները:

3-րդ հազ. վերջում Շոփրում մեծ թափ է ստանում սոցիալական շերտավորումը: Նկատվում է արհեստների ենթաստորաբաժանում, արտադրանքի բազմաձևություն:

Շոփրյան քաղաքներում հատկապես ծաղկել է առևտուրը, որը, թերևս,

եղել է բնակչության հիմնական գործունեությունը: Ծովից մտել է Միջագետք-Անատոլիա առևտրական համակարգի մեջ: Այս իմաստով անհիմն չէ ենթադրությունը, թե կարում Խալսիտումը գտնվել է Նորշունի շրջանում (Հ.Բըրնի): Կապադովկիական տեքստերում հիշվում են Ծովքում տեղադրվող Շուպանա, Դեգիշանա և այլ առևտրական կետեր: Առևտրական կապերի վկաներն են Ծովքի բնակավայրերում հայտնաբերված սիրիական, միջագետքյան, անատոլիական, անդրկովկասյան ներմուծված նյութերը: Վերին Եփրատից արտահանվում էր մետաղ, փայտ, գինի, մեղր, ձիթենի, ներ էր մուծվում խեցեղեն, համեմունքներ և այլն: Բրոնզեդարյան Ծովքը գտնվում էր գրեթե նույն առևտրական ճանապարհների վրա, ինչ անտիկ շրջանում (Գ.Ալզակե): Այստեղ համդիպում էին «արևելյան և արևմտյան ճանապարհները» (Չ.Մելլարթ), որոնցով կառավրվում էր հիմնականում ոսկու, պղնձի և լազվարդի առևտուրը Հին Արևելքում: 3-րդ հազ. վերջում այդ ճանապարհները վերածխկվում էին Էրլայի, սպա՝ Արադի և Ուրի 3-րդ դիմաստիայի կողմից:

Ջողաքակրթության ձևավորման ծովքյան տարբերակը ավելի մնաց է անատոլիականին, երբ քաղաքային կայքը առաջանում է ոչ թե ռոդոպի երկրագործության հետևանքով (Միջագետք-Եգիպտոս), այլ քաղաքակիրք աշխարհի հետ փոխազդեցության մրմռոյաբանում, որտեղ առաջնային դեր են խաղում առևտուրը և տարածքի բարենպաստ աշխարհագրական դիրքը:

Մոտ 2000թ. մայրաքաղաք Նորշունի և վարչական կենտրոն Թեփեջիքի ավերումով և մնացած բնակավայրերի լրումով՝ Ծովքում նկատվում է քաղաքային կյանքի անկում, որը, սակայն, երկար չի տևում:

ԲՈՅԱԶՅԱՆ ՎԱՀԵ (ԵՊՀ)

*ԲԵԼՈՒՋԵՐԵՆԻ ԼԵՁՎԱԿԱՆ
ԱՌԱՆՉՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ*

Բելուջերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի

իրանական ճյուղի հյուսիս-արևմտյան խմբին՝ սերտորեն կապվելով քրդերենի, քալիշերենի, քաթերենի, միջին իրանական լեզուներից՝ պարսերենի հետ: Բելուջերենի ճիշտ դասակարգումը հնարավոր եղավ իրականացնել միայն XX դարում, միջին իրանական լեզուներով թուրքալանյան տեքստերի ուսումնասիրության հիման վրա:

Բելուջերենի տարածման սահմանները բավական ընդարձակ են. Թուրքմենստանի Մարվ օազիսից մինչև Պարսից ծոց, Միստանից մինչև Հիլմենդի հովիտն Աֆղանստանում՝ ընդգրկելով պակիստանյան Մեքրանը՝ մինչև Ինդոսի հովիտ:

Որպես արևմտյան իրանական լեզու, բելուջերենը, սակայն, դրսևորում է որոշակի յուրահատկություններ հնչյունական համակարգում (պահպանել է հին իրանական միջձայնավորային *p, t, k*. հմմտ. *ap-ջուր, brat-եղբայր, hmk-խոզ*; իրանական *f, θ, x* փոխվում են *p, t, k*. հմմտ. բելուջ. *kopag-ուս, հին պրսկ. kaufa*; բելուջ. *kar-ավանակ, ավեսա. xara, և.պ. xar*; հին իրանական *w-*ն հնչյունափոխվում է *g-*ի կամ դառնում է *gw*. հմմտ. բելուջ. *gwat-քամի, ավեսա. vata, և.պ. bad* և այլն), ձևաբանության (անորոշ դերբայի *-ag, [-ay]* վերջավորությունը իրանական լեզուներից հանդիպում է միայն բելուջերենում), շարահյուսության և քառապաշարի բնագավառում: Բելուջերենի քառապաշարում զգալի տեղ է գրավում արևելաիրանական սուրսարսաը (հմմտ. բելուջ. *nagan-հաց, սողդ. nγn, աֆղ. nayan, քայց և.պ. nān*; բելուջ. *šarr-լավ, սողդ. šyr, աֆղ. šə, օբմուրի širr, քայց միջ.պ. և.պ. xab*): Էզաֆերի կոմսարուկցիան, որ հատուկ է հարավ-արևմտյան իրանական լեզուներին, ինչպես նաև քրդերենին, բացակայում է բելուջերենում, ավելի հաճախ օգտագործվում է էրզատիվ կառուցվածքը:

Բելուջերենում փոխառյալ բառերի հիմնական աղբյուրը պարսկերենն է, շատ բառեր մույնիսկ հին պարսկերենից փոխառություններ են, որոնք չեն պահպանվել ժամանակակից լեզվում (հմմտ. բելուջ. *ժր-տակ, միջ.պ. ժր, և.պ. z-ir*): Մյուս կարևոր աղբյուրը եղել են հնդկական լեզուները՝ սինդհի, լանդհա, վերջերս նաև ուրդու, ավելի քիչ փոխառություններ կան դրավիդյան լեզվաընտանիքին պատկանող բրահույի լեզվից, որոնք որպես աուրստրալի ազդեցության աղբյուր բելուջերենն իր մեջ է ներառել այդ լեզուն կրողների ներկայիս բնակության տարածքներ մուտք գործելուց հետո դարերի շփման

ընթացքում:

Բելուջերենի բարբառների բաժանման առաջին փորձը պատկանում է Վ.Գ.այգերին, որն այն դասակարգում է երկու խմբի՝ հյուսիսային և հարավային (Մեքքանի), միաժամանակ ցույց տալով, որ այդ խմբերը միմյանցից խստորեն տարբերվում են քե՝ բառապաշարով, և քե՝ հնչյունաբանությամբ: Որպես բառաֆոնդի տարբերություն նա վկայակոչում է այն փաստը, որ հարավային խմբում ավելի շատ առկա են հարևան հնդկական լեզուներից փոխառություններ, իսկ հարավայինում գերիշխում են պարսկական ծագման բառերը: Հետագայում մի շարք գիտնականներ, այս բաժանումը հիմք ընդունելով, երբեմն նաև հյուսիսային ու հարավային եզրերի փոխարեն օգտագործելով, համապատասխանաբար, արևելյան ու արևմտյան, ավեցին մի քանի այլ բաժանումներ: Մանրամասն չանդրադառնալով բելուջերենի բարբառների բաժանման պատմությանը, նշենք, որ երկար ուսումնասիրություններից հետո Ջ.Էլֆենբայնը հյուսիսային և հարավային անվանումները համարելով մյուս բարբառային խմբերի վերաբերյալ որոշ հեղինակների գիտելիքների սահմանափակության արդյունք, նախապես իր իսկ արված արևելյան ու արևմտյան բաժանման հիման վրա տվեց բելուջերենի վեց բարբառային խումբ.

1. Արևելյան լեռնային բարբառներ. խոսվում են Զվետտայից արևելք գտնվող լեռնային ցեղերի (հիմնականում մարի և բուգտի), Դերա Դազի Խանի, Սիբիի, Ինդոսի հովտի շրջաններում:

2. Ուսիշանի. սա բաժանվում է հետևյալ ենթաբարբառների՝ Քելարի, Չադայ-Խարանի, Աֆղանի, Սաքիադդի (ներառյալ Մերվի բարբառը) և Փանջգուրի:

3. Սարավանի. խոսվում է Իրանում, Ջահեդանից հարավ ընկած շրջանում, տարածվում է մինչև Ռասք:

4. Քեչի. հիմնականում խոսվում է պակիստանյան Մեքքանում՝ Քեչ գետի հովտում:

5. Լոթունի կամ լաշարի. ընդգրկում է Իրանշահի շահրեստանը, արևմուտքում տարածվում է մինչև Ֆանուք:

6. Ափամեքձ շրջանների բարբառներ. խոսվում է Բիաբանից (Իրանում) դեպի արևելք՝ մինչև Չաբահար, հյուսիսում ընդգրկելով Դասքբենդն ու

Ներքնակը: Այս խմբի բարբառները հայտնի են որպես Բելուջիստանում հեղինակություն վայելող ռինդ ցեղի խափածքներ:

Բելուջերենը բավական պահպանողական լեզու է, և նրա բարբառները, չնայած այն տարածքների ընդարձակությանը, որտեղ խոսվում են, հանդես են բերում զգալի նմանություններ, և, փաստորեն, տարբեր բարբառների կրողները (բացի Արևելյան լեռնային խմբի) միանգամայն դժուրությամբ հասկանում են միմյանց:

ԴԱԼԱԼՅԱՆ ՏՈՐՔ (ԵՊՀ)

*ՍԱԹԱՆԱՅԻ (ՍԱԹԵՆԻԿԻ) ԴԻՅԱԲԱՆԱԿԱՆ
ԿԵՐՊԱՐԸ ԵՎ ՆՐԱ ՋՈՒԳԱՆԵՌՆԵՐԸ
ՀԱՐԵՎԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄՈՏ*

Օտսկան Նաքտյան դիցավեպի կենտրոնական կանացի կերպարը կոչվում է Սաքանա կամ Շաքանա: Նրան բնորոշ են այնպիսի գծեր, որոնք սովորական հերոսոտիտ քողի տակից պարզորոշ երևան են հանում Սաքանա-աստվածուհու հատկանիշները: Մասնավորապես, Սաքանայի դիցաբանական կերպարի հնության օգտին է խոսում այլ ժողովուրդների մոտ նմանատիպ գուգահեռ կերպարների գոյության փաստը: Դրանց համընկնող հատկանիշները վառ դրսևորվում են պահպանված առասպելներում:

1) Ծննդյան առասպելում՝

ա) Սաքանան ծնվում է ձկանակերպ Չերասայից, աստրական Շամիրամը (=Իշքար) ծնվում է ձկան վերածված Դերկետոյից, հայկական Աստղիկը ծնվում է ծովից, քերես՝ ձկնակերպ Շովինարից, հնդկական Մատյավատին ծնվում է ձկան վերածված փերոց;

բ) ծնունդը տեղի է ունենում որևէ օրենքի (ավանդույթի) խախտմամբ, որը հետևանք է աղջկա մոր մահվան, կամ որի հետևանքն է աղջկա մոր մահը (նույնն է՝ ձկան վերածվելը, ջրի կամ կրակի մեջ նետվելը);

գ) ջուրը կամ կրակը (երբեմն՝ ջրի վերածված կրակը) զեւեղված է սքրազան համարվող տարածքում՝ ատրի լիճ, ակունք, ջրհոր կամ բոնիր, որը

պաշտանմունքի առաքկա է : Այն մասն ղիտվում է որպես համաշխարհային ծովի սկզբնակետ, ակունք:

2) Ջանազան ղրվագներում նկատելի է աղավնու առնչությունը մոր կամ մրա դատեր կերպաքննրին, որոնք մասն պատկերացվում են աղավանկերայ (Չերասա, Աստղիկ, Շամիրամ-Դեղձուն Շամ):

3) Չկնակերպ մոր հետ սերտորեն կապված են երկվորյակները՝ առավել հաճախ, քերես, որպես մրա որդիներ. ընդ որում երկվորյակներից մեկն ամուսնանում է իր քրոջ (մոր կողմից) հետ. Մաթանան՝ Ուրըզմագի, Մանասարը (=Արամագի)՝ Դեղձուն Շամի (=Շամիրամ), Վահագնը (երկվորյակային կերպար)՝ Աստղիկի հետ:

4) Մաթանան, Աստղիկը, Մատյավատին առնչվում են մշուշի առաջացմանն ու ջրային տարերքին, սիրում են լողանալ գետում, որտեղ մրանց և ամպրոպի աստծո կապից հեռագայում ծնվում է արևի մեռնող-հառնող աստվածը:

5) Վերոնշվածը սիրո դիցուհու ատրիբուտների մեջ առանձնանում է աշտարակը, որի վրա մատած կամ կանգնած են պատկերացվում Մաթանան, Աստղիկը, Շամիրամը (=Դեղձուն Շամ): Սրանով ավելի հավանական է թվում հայ. աշտարակ, հուն. stēle «արձանապույտ» քառերի կապը Istar դիցանվան կամ մրա տարատեսակների հետ:

6) Նշված սիրո դիցուհու՝ տարբեր ժողովուրդների մոտ պահպանված անուններում կարելի է առանձնացնել *st(r) արմատը, ինչպես և մրա ամուսնու (սիրեկանի)՝ ամպրոպի աստծո անվան մեջ երբեմն առկա է * art «տիեզերական օրեմբ, ձև, արդարություն» արմատը:

Այս առասպելական գուգարամությունները նկատելիորեն ազդել են հայոց Մաթենիկ քագուհու կերպարի վրա՝ անգամ մրա կյանքի օրոք: Հայանի է, որ Արտաշես-Մաթենիկ ամուսնական գույզը, հենց իրենց կողմից, համադրվել է Վահագն-Աստղիկ աստվածային գույզի հետ, ինչը նպատակ է ունեցել ուժեղացնելու քագավորական իշխանությունը և այն ղնելու դիցա-գաղափարական հիմքի վրա: Մա մասն ուղղված է եղել ծագումով ալան քագուհու «հայացմանն» ու ժողովրդի համար ընդունելի դարձնելուն: Այսուհանդերձ, ալանական մույնանուն աստվածուհու առասպելները, քերես վերաբնակեցված ալանների հետ միասին, մերթափանցել են Հայաստան և

զգալիորեն ազդել Սարենիկ քաղաիտ կերպարի հետագա ձևավորման վրա, որին վերագրվել են գեասափնյա սիրային արկածի, վիշապագումների հետ կապի, ժայռին գամված հերոսին ծնելու և այլ առասպելական հատկանիշներ:

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԴԱՎԻԹ (ԵՊՀ)

*ԱՅՂԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԻ ԶԱՆԻ
ՆԱԽԱԴՐՅԱԼ ՆԵՐԻ ՇՈՒՐՋ*

«Չմվածված ժողովուրդ» անվանումն է ստացել ամենահետաքրքիր իրանական ժողովուրդներից մեկը՝ աֆղան կամ փաշտուն ժողովուրդը: Օտար տերությունները անկարող եղան կոտրելու այս ազատասունջ ժողովրդի կամքն ու ըմբոստ ոգին: Նշվածի հավաստումն են հանդիսանում 18-րդ դարի սկզբին տեղի ունեցած իրադարձությունները, երբ Մեֆյան Իբանի տիրապետության տակ գտնվող փաշտունական խոշորագույն երկու ցեղերից մեկը՝ դալջայ ցեղամիավորումը ապստամբություն բարձրացրեց և անկախ իշխանություն ստեղծեց: Իբանի արքունիքի հովանավորությամբ Դանդախարի բեկլարբեկ Գուրգին խանի և իրանական այլ ֆեոդալների վարած ծանր հարկային քաղաքականության հետևանքով, որոնք հիմնվում էին կրոնական տարբերությունների (սուննի-շիա) վրա, փաշտունական դալջայ ցեղամիավորումը բարձրացրեց զինված ապստամբություն: Այս ապստամբությունը ղեկավարում էր Միր-Վայսը, որը ճկուն, հետառես և շրջահայաց առաջնորդ էր և սերում էր դալջայական շահ-ալամ-խել իշխանական տոհմից: Ապստամբած դալջաներին հաջողվեց դիմագրավել և ջախջախել սեֆյան արքունիքի կողմից ուղարկված պատժիչ զորքերը և դրանով իսկ հաստատել իրենց անկախ պետականության իրավունքը:

Հարկ է նշել, որ աֆղանական (փաշտունական) առաջին պետականության կազմավորման գործում դեր խաղացին հետևյալ նախադրյալները.

1. Երկու հարևան կայսրությունների՝ Մեֆյան Իբանի և մահմեդական

զգալիորեն ազդել Սաքենիկ քազուհու կերպարի հետագա ձևավորման վրա, որին վերագրվել են գեոսափնյա սիրային արկածի, վիշապազույնների հետ կապի, ժայռին զամված հերոսին ծնելու և այլ առասպելական հատկանիշներ:

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԴԱՎԻԹ (ԵՊՀ)

*ԱՅԴԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԻ ԶԱՆԻ
ՆԱԽԱԴՐՅԱԼ ՆԵՐԻ ՇՈՒՐՋ*

«Չնվաճված ժողովուրդ» անվանումն է ստացել ամենահետաքրքիր իրանական ժողովուրդներից մեկը՝ աֆղան կամ փաշտուն ժողովուրդը: Օտար տերությունները անկարող եղան կոտորելու այս ազատատենչ ժողովրդի կամքն ու ըմբոստ ոգին: Նշվածի հավաստումն են հանդիսանում 18-րդ դարի սկզբին տեղի ունեցած իրադարձությունները, երբ Մեֆյան Իրանի տիրապետության տակ զանվոդ փաշտունական խոշորագույն երկու ցեղերից մեկը՝ դալջայ ցեղամիավորումը ապստամբություն բարձրացրեց և անկախ իշխանություն ստեղծեց: Իրանի արքունիքի հովանավորությամբ Ղանդահարի բեկլարբեկ Գուրգին խանի և իրանական այլ ֆեոդալների վարած ծանր հարկային քաղաքականության հետևանքով, որոնք հիմնվում էին կրոնական տարբերությունների (սուննի-շիա) վրա, փաշտունական դալջայ ցեղամիավորումը բարձրացրեց զինված ապստամբություն: Այս ապստամբությունը ղեկավարում էր Միր-Վայսը, որը ճկուն, հետադեմ և շրջահայաց առաջնորդ էր և սերում էր դալջայական շահ-ալամ-խեյ իշխանական տոհմից: Ապստամբած դալջաներին հաջողվեց դիմագրավել և ջախջախել սեֆյան արքունիքի կողմից ուղարկված պատժիչ զորքերը և դրանով իսկ հաստատել իրենց անկախ պետականության իրավունքը:

Հարկ է նշել, որ աֆղանական (փաշտունական) առաջին պետականության կազմավորման գործում դեր խաղացին հետևյալ նախադրյալները.

1. Երկու հարևան կայսրությունների՝ Մեֆյան Իրանի և մահմեդական

Հնդկաստանի ներքաղաքական ճգնաժամը,

2. Փաշտունական ցեղերի ներսում դեռևս 16-րդ դարից սկսվաց ներցեղային կոնսոլիդացիան՝ «դեմոկրատական» դաջայների և ցեղապետային կենտրոնացված իշխանություն ունեցող արդալիների (դոտանի) շրջանում,

3. Փաշտունական ցեղերի մեջ ավատատիրական հարաբերությունների զարգացումը,

4. Ավատատիրական հարաբերություններով և ներցեղային համախմբվածությամբ պայմանավորված սեփական պետականություն ունենալու անհրաժեշտությունը:

ԿՈՍՏԻԿՅԱՆ ԶՐԻՍՏԻՆԵ (ԱԻ)

XIX ԴԱՐԻ ԲՈՒՄ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՐԶԱ ՅՈՒՍՈՒՖ ՆԵՐՍԵՍՈՎԻ «ԹԱՐԻԽ-Ե ՍԱՖԻ» ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՈՒՄ

Ղարաբաղի XIX դարի պատմագրության մեջ իր ուրույն տեղը գրադեցնող Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆիում» (պրակ. «Ճշմարտացի պատմություն») մի ընդարձակ րաժին է հատկացված դարասկզբի երկու ռուս-պարսկական պատերազմների պատմությանը: Այդ րաժինը (9-րդ մադալե) կրում է հետևյալ վերնագիրը՝ «Ռուսիայի մուտքը Կովկասյան տարածքներ, քաղաքների գրավումը և կռիվները ղզլաշների դեմ»: Ներսեսովը, ի տարբերություն Ղարաբաղի մյուս պատմագիրների (Միրզա Ալիգյոզալ, Միրզա Ջամալ, Առ. Կոստանյան և այլն), շարադրել է այդ պատերազմների մանրամասն ու ամբողջական պատմությունը, որը մի շարք հարցերում լրացնում ու ճշգրտում է ոչ միայն պարսկալեզու պալատական պատմագրության, այլև ռուսական աղբյուրների տվյալները:

Ճիշտ է, առաջին ռուս-պարսկական պատերազմին (1804-1813) վերաբերող որոշ հատվածներ «Թարիխ-ե Սաֆիում» կրում են կոմպիլյացիոն բնույթ, սակայն այստեղ քիչ չեն մտն այնպիսի հատվածները, որոնք ունեն

պատմագիտական բարձր արժեք և հարստացնում են այդ պատերազմի պատմությունը իրենց նոր տվյալներով:

Մասնավորապես, խոսելով 1806թ. զարմանը Ղարաբաղում տեղի ունեցող դեպքերի մասին, հեղինակը հաստատում է ռուսական իշխանությունների նկատմամբ Իրրահիմ խանի ունեցած դավաճանական մտադրությունները և դրանք բացատրում խանի զստամյալ տաքիքով, որի «զլխում անխելք ու սին մտքեր էին ծագում»:

Ներսեսովը հետաքրքրական մանրամասներ է հաղորդում 1811-1812թթ. Ղարաբաղում զարգացող իրադարձությունների, Սուլթանբուղի և Ալանդուզի ճակատամարտերի վերաբերյալ:

Պատմագիտական առումով առավել արժեքավոր է վերոհիշյալ բաժնի ռուս-պարսկական երկրորդ (1826-1828թթ.) պատերազմի պատմությունն ընդգրկող մասը: Հեղինակը գրի է առել և համակողմանիորեն լուսաբանել ոչ միայն Ղարաբաղում, այլև հարևան մի շարք տարածքներում (Ղարաբաղի, Գանձակի, Նախիջևանի ու այլ շրջաններում) ծավալվող պատերազմական իրադարձությունները: Պարսկական բանակի զորավար Ամիր խան սադրաբի մոտ վարելով զրազրի (պրսկ. միբզա) պաշտոն՝ Միբզա Յուսուֆ Ներսեսովը ոչ միայն ականատես է եղել պարսից զորքերի մի շարք ռազմական գործողություններին, այլև ծանոթ է եղել պարսիկ զորավարի նամակագրությամբ բազաժառանգի հետ: Դրա շնորհիվ հեղինակը կարողացել է շարադրել պատերազմական դեպքերի մեծ մասի հավաստի ու հանգամանալից պատմությունը, ինչպես նաև վերլուծել պարսից հրամանատարության ստրատեգիական նպատակները, թույլ տված սխալները, զորավարների միջև եղած անհամաձայնությունները, արագացրել պարսկական բանակում տիրող արամադրությունները:

Ներսեսովը մանրամասն քննում է 1826-1828թթ. պատերազմի բունկման պատճառները: Արժեքավոր տվյալներ է հաղորդում պարսկական բանակի կազմի, նրա առանձին զորամիավորումների հրամանատարների և շարժման ուղությունների վերաբերյալ:

Կարևոր նորություններով ու հավաստի տեղեկություններով հարուստ են հատկապես Շուշիի պաշտպանությամբ, Շախխորի, Գանձակի, Ջևանբուլաղի մարտերին և պատերազմական այլ միջադեպերին նվիրված

հատվածները:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԱԳ (ՊԻ)

*1919թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի ՀԱՅ-ԶՐԴԱԿԱՆ
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՄԻ ԶԱՆԻ ՀԱՐՅԵՐԻ ՇՈՒՐՋ*

1. Հայ-քրդական հարաբերություններին վերաբերվող յուրաքանչյուր փաստ մեծ հետաքրքրություն է ներկայացնում թե՛ պատմական և թե՛ արդի քաղաքական նկատառումներով: Այդ համգամանքն առավելապես կարևորվում է, երբ խնդիրը շաղկապված է հայ-քրդական համագործակցության հետ: Հարևան ժողովուրդների կյանքում ավելի շատ անվտանգության մթնոլորտ է ափրում, որից լիովին չեն ձեռքազատվել ինչպես հայերը, այնպես էլ, հատկապես, քրդերը, ինչը բացառվում է անցյալի իրողություններով:

Այսօր առանձնապես կարևորվում է դրկից, ինչ-որ չափով նաև բախտակից ժողովուրդների համագործակցության փորձերի ուսումնասիրությունը:

2. Առաջին աշխարհամարտից հետո քրդերը կոտորակված էին և չկարողացան միասնական դիրքորոշման հասնել ներքին և արտաքին կողմնորոշումների հարցերում, որը ուներ սուրյնկալիվ և օրյնկալիվ պատճառներ: Քրդական շարժման արտահայտիչները մի քանի կազմակերպություններ էին:

Պետականությունից գուրկ լինելով՝ քրդերը Շերիֆ փաշայի գլխավորությամբ Փարիզի խորհրդաժողով ուղարկեցին պատվիրակություն, որին ոչ ոք պաշտոնապես չճանաչեց: Քրդերը հիմնականում հավակնում էին հայերի պահանջների սահմաններում գտնվող հողերին: Նրանց ներկայացրած հուշագիրը ըստ արժանվոյն չգնահատվեց և լքջորեն չընդունվեց: Հայ հասարակական կարծիքը այդ հուշագրի նկատմամբ լայնությունից այն կողմ չանցավ:

A II
84821

3. Տեղությունները անապրեր չէին քրդական շարժումների նկատմամբ: Նրանք քրդական հարցը միշտ դիտարկում էին մերձավորարևելյան տարածաշրջանի խնդիրների համայնքում, սակայն սովորաբար այն ստորադասելով «թուրքական» և հայկական խնդիրների՝ հաշվի առնելով դրանց առավել կարևորությունը ու կշիռը միջազգային հարաբերությունների համակարգում և փորձում կարգավորել միասնության մեջ՝ հասկանալով, որ մեկի լուծումը առանց մյուսների որոշման կլինի թերի ու ժամանակավոր: Հատկապես կարևորվում էր հայկական և քրդական հարցերի սերտ փոխկապակցվածությունը, իսկ երբեմն նույնիսկ գերադասում էին քրդական տարրի դերը:

4. Հայ-քրդական գործակցությունը ձեռնառու էր երկու կողմերին գրեթե հավասարապես: Եթե քրդերին այն անհրաժեշտ էր միջազգային ասպարեզում իրենց դիրքը ամրապնդելու և դիվանագիտական շրջաններում որոշակի կշիռ վաստակելու համար, իմիջայլոց, ինչ-որ չափով նաև շնորհիվ հայկական հարցի հեղինակության, ապա հայերին այն պետք էր միջազգայինից ավելի ներքին քաղաքականության բնագավառում իր խնդիրների լուծման նպատակով: Այդ պարագան կապված էր առաջին հերթին ընդհանուր բշրամու՝ թուրք բռնապետության դեմ համատեղ ճակատ ստեղծելու խնդրի հետ: Ընդհանուր առմամբ քրդերը Հայաստանի Հանրապետության հանդեպ առերևույթ չեզոքությունից այն կողմ չանցան:

5. Գործակցության զագաքնակետը 1919թ. նոյեմբերի 20-ին Փարիզում կնքված հայ-քրդական համաձայնագիրն էր, որով հռչակվում էր միևնույն շահերի և նպատակների առկայությունը: Բրիտանական կայսրությունը դրական ընդունեց և պաշտպանեց այն՝ հետապնդելով հեռահար նպատակներ: Համաձայնագրի հանդեպ ավելի ուշադիր էին հայերը, քանզի այն շոշափում էր նրանց կենսական շահերը: Հայ քաղաքական շրջանների մտաեցումները և վերաբերմունքը միատեսակ չէր: Այս հարցի քննարկումը հայ գործիչները դիտարկում էին իրենց քաղաքական և միջկուսակցական պայքարի տեսանկյունից: Մտաեցումները հիմնականում իրարանքեմ էին և բաժանվել էին երկու հակամարտ ճակատի՝ դաշնակցական և ոչ-դաշնակցական:

6. Միջազգային դիվանագիտություն «հիմնավորապես» ոտք դրած

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ՄԱՍԻՆ
ՍԵՆՏԵՐԻ ՄԱՍԻՆ
ՍԵՆՏԵՐԻ ՄԱՍԻՆ

քրդական հարցը եվրոպական տերությունների «ջանքերով» ավելի ամրապնդվեց Սևրի դաշնագրով: Զորքերի համար գլխավոր սպառնալիքը շարունակում էին մնալ բնականակները: Հետագայում, վերջիններիս և արևմտյան տերությունների ջանքերով քրդական հարցը Լոզանի խորհրդաժողովում մոռացության մատնվեց՝ իր տեղը զիջելով Մոսուլի նավթին:

Այժմ, քրդական ազգային-ազատագրական շարժման ներկա փուլում, հայերը ևս պետք է ստատար կանգնեն նրանց: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ քրդերը մախ և առաջ, պետք է միասնական ճակատով հանդես գան և հստակեցնեն հայկական հարցի հանդեպ իրենց մոտեցումները:

ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՐՍԵՆ (ԵՊՀ)

*ԱՐԶԱՅԻՅ ԱՐԶԱ ՉԱՐԵՀԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՐԱԿԻՅ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐԻ ՄԱՍԻՆ
(Մի բացառիկ դրամամուշի առիթով)*

Վիեննայի Մխիթարյանների և Բեռլինի քանգարանի դրամագիտական հավաքածուներում պահվում են արքայից արքա Ջարեհի անունը և միևնույն պատկերատիպը կրող խիստ ուշագրավ մեկական պղնձյա դրամամուշներ, որոնք տակավին կարող են հատուկ մասնագիտական քննության: 1840թ. Գ.Սանդերգերի կողմից առաջին անգամ հրապարակվելուց հետո, խնդրո առարկա դրամին այս կամ այն առիթով անդրադարձել են Ֆրիդլանդերը, Ֆարքիսիուսը, Յ.Մաքկվարտը, Հ.Հյուբշմանը, Արոպետը, Հ.Տալյանը, Կ.Բասմաջյանը, Չ.Պատուկյանը և այլք: Ներկայումս արժատուացած է այն տեսակետը, ըստ որի հիշյալ դրամը կեղծ է: Արքայից արքա Ջարեհի անունը կրող դրամը կեղծ համարելու միակ պատճառը ըստ էության եղել է այն, որ հասցեատիրոջ հարցում միշտ սխալ ընտրություն է կատարվել: Ուսումնասիրողների մեծ մասը կանգ է առել Մոփրի Ջարեհ քազավորի, իսկ Չ.Պատուկյանը՝ Արտաշես Ա-ի հայր Ջարեհի քնկնածության վրա: Եվ երկու դեպքում էլ անխառնափեղի եզրակացությունը եղել է այն, որ դրամը կեղծ է,

քանզի ոչ Ծովքի տիրակալ Ջարենը կարող էր արտաշիսյան (տիգրանյան) թագ կրել և արքայից արքա տիտղոսն ունենալ և ոչ էլ առավել ևս՝ Արտաշես Ա-ի հայրը:

Հունա-հռոմեական սկզբնաղբյուրների լույսի ներքո հարցի մոդ տեսանկյունից քննարկումը հնարավորություն է տալիս մերժել դրամի կեղծ լինելու մասին ընդունված կարծիքը և կատարել ներքոշարադրյալ եզրակացությունները:

1. Արտաշիսյան տիրակալների ինքնատիպ խույրը և «արքայից արքա» տիտղոսը կրող Ջարենը Տիգրան Մեծի և Կլեոպատրայի ավագ որդին է: Վերջինս լինելով օրինական գահաժառանգ՝ մախքան սպասաւմբություն բարձրացնելը, ըստ երևույթին, արդեն հասցրել էր թագ ստանալ հորից և գահակից դառնալ մրան: Տիգրանի դեմ բացահայտ ելույթից հետո Ջարենը հռչակվել է արքայից արքա և հասցրել իր պատկերով դրամ հատել:

2. Արքայորդի Ջարենի բարձրացրած սպասաւմբությունը, հակառակ Ապպիանոսի և Վալերիոս Մարսինոսի հպանցիկ տեղեկությունների, բավականին լուրջ իրադարձություն է եղել Տիգրան Մեծի տերության կյանքում:

3. Գատելով ըստ ամենայնի, թագաժառանգը ամուր հեմարան է ունեցել ի դեմս հայ տոհմիկ ազնվականության այն մասի, որը դժգոհ է եղել Տիգրան Բ-ի կողմից իրենց իրավունքները սահմանափակող քաղաքականությունից և արքունիքում հելլենիստական արժեքների արմատավորումից:

4. Ջարենի ելույթը սերտ պատճառական կապի մեջ է գտնվել սփրիական և պոնտական թատերաբեմում ծավալված համաժամանակյա իրադարձությունների հետ, ինչը ուղղակիորեն մպաստել է մրա համեմատարար երկարատևությանը (մ.թ.ա. 72թ. ամառ-աշուն):

5. Ջարենին սպասաւմբության մղելու գործում ամենևին էլ ոչ երկրորդական դեր է ունեցել մրա պապ Միերդատ Եվպատորը:

6. Գահաժառանգի սպասաւմբությունը ստիպել է Տիգրանին ժամանակավորապես դադարեցնել ռազմական ձեռնարկումները Կոյլեսիբիայում և Փյունիկիայում: Այն բացահայտ քնույթ է հաղորդել հայ տոհմիկ ավագանու որոշ ներկայացուցիչների և Տիգրան Բ-ի միջև առկա խուլ հակամարտությանը և վտանգավոր մախադեպ հանդիսացել Ջարենի երկու

կրտսեր եղբայրների իրարահաջորդ հետագա ելույթների համար:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ (ԵՊՀ)

ԱՐԱՐՆԵՐԸ ԵՎ 1915Թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայ ժողովրդի ծանր վիճակը Օսմանյան կայսրությունում և դրա հետևանքը հանդիսացող ցեղասպանության պատմությունը միշտ էլ զբաղեցրել է հայ և օտար պատմաբաններին: Լույս են տեսել բազմաթիվ և բազմակերպ մեծ թվով ուսումնասիրություններ, որոնց մեջ իրենց ուրույն տեղն ունեն հատկապես արաբ հեղինակների աշխատությունները (Ֆուադ Հասան Հաֆիզ, Սալեհ Ջահի ադ Դին, Նաիմ ալ-Յաֆիի, Մրվան ալ-Մուդավարի Մուսա Բրեսա և ուրիշներ): Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նաև դեպքերին ժամանակակից արաբ հասարակական մտքի ու գործիչների անդրադարձները մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

2. Առաջին հայացքից զարմանալի և տարակուսելի է թվում արաբական սկզբնաղբյուրների ասկավաթիվությունը, որը պետք է բացատրել ոչ քեղամեջ բացակայությամբ, այլ շրջանառության մեջ չգտնվելու պատճառով: Նշելի է, որ ցայսօր բավարար հետևողականությամբ և խորությամբ չեն ուսումնասիրվել արաբական արխիվները, ինչպես նաև արաբական մամուլի հավաքածուները:

3. 1915թ. հայոց ցեղասպանության պատմության առաջնակարգ սկզբնաղբյուր է Խարբեթի գավառի նախկին կառավարիչ Ֆայեզ ալ-Դուսեյնի «Ջաբդերը Հայաստանում (Ականատեսի վկայություններ)» հուշագրությունը, որը գրվել է 1915-1916թթ. Դիարբեքիում՝ դեպքերի թարմ տպավորությունների և ականատեսների պատմածների հիման վրա:

Ի մի քերելով իր վկայությունները՝ ալ-Դուսեյնը հավաստիացնում է, քե իր «գրածները դժբախտ հայ ազգի հանդեպ թուրքերի գործադրած զազանությունների մի չնչին մասն են միայն»: Հեղինակը մերժում է քուրդական պաշտոնական այն ստահող տեսակետները, քե թուրքական

բանակի բիկուներում հայերի հուժկու ասպատամբությունն է ստիպել օսմանյան կառավարությանը՝ կազմակերպելու հայերի տարագրությունը: Արաբ ականատեսը վտրձել է ճշգրտել մահ ցեղասպանության զոհերի քանակը և եկել այն եզրակացության, որ այն կազմել է շուրջ 1.200.000 մարդ:

4. Մեծ դեպքերին ակնամատն է եղել ու դատապարտել մահ արաբ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, Մեքքայի շերիֆ և Էմիր Հուսեյն իբն-Ալին: Հայտնի են Հուսեյն իբն-Ալիի մի քանի ուղերձներն՝ ուղղված, մասնավորապես, Միջագետքի արաբ կառավարիչներին ու ամիրաներին: Ուղերձներով շերիֆը հաստատակամորեն պահանջում էր արաբական տեղական իշխանավորնեից իրենց մահաճգներում հայտնված տաքագրյալ հայերին պաշտպանելու, հովանավորելու և ամեն տեսակ օգնություն ցույց տալու վերաբերյալ: Դատապարտելով երիտթուրքերի հակահայ քաղաքականությունը, շերիֆը շեշտում էր, քե մրանց ոճրագործությունները ընդհանուր ոչինչ չունեն խալսմի հետ:

5. Հայերի 1915թ. մեծ թղթերգության օրերին Օսմանյան կայսրության բազմաթիվ արաբ պաշտոնյաներ (մահանգապետեր, դատավորներ և այլն) մարդասիրության և ազնվության հիմնալի օրինակներ ցույց տվեցին (Ջալալ բեկ, Սամի բեկ, Յուսուֆ Դիա բեկ, Ալի Սաուաա բեկ և շատ ուրիշներ): Վտանգի ենթարկելով իրենց կյանքը, նրանք փրկեցին տասնյակ հազարավոր հայերի: Կտրականապես հրաժարվելով հայերին ոչնչացնելու թուրքական կառավարության հրահանգը կատարելուց, մահանգապետ Ջալալ Բեկը հայտարարել է. «Ես այս մահանգի (Հյուս. Միրիս) կառավարիչն եմ և ոչ թե դահիճը»: Դեղը-էլ-Ջորի արաբ մահանգապետ Ալի Սաուաա Բեկը անձնական պատասխանատվությամբ արգելել է հայերի կոտորածը, հայտարարելով, որ ինքը «ոչ մեկին թույլ չի տա այդ անելու»: Ազնվության ու մարդասիրության առանձնակի օրինակ է ցույց տվել արաբ կրոնավոր Աբդուլլահ Մեսսիհն, որը Միրիսի Համա քաղաքում ծնողագուրկ հայ երեխաների համար որբանոց է կառուցել, անապատից հավաքել հայ որբերին և փրկել նրանց: Հայտնի են մահ մահա բազմաթիվ այլ դեպքեր, որոնք ասպացուցում են, քե հայ ժողովրդի մեծ թղթերգության օրերին բովանդակ արաբ ժողովուրդը ոչ միայն հրաժարվեց կատարել թուրքական կառավարողների հրահանգները՝ հայերին կոտորելու վերաբերյալ, այլև թույլ չտվեց, որ անապատում հայտնված հայերը

ռչնչանան սովից, հիվանդություններից, սրից:

6. Եթե շլիներ արարքների հայանապաստ դիրքորոշումը, ապա, անկասկած, հայերի կորուստները կլինեին ավելի շատ և իրականություն կարող էր դառնալ արևմտահայության իսպառ ռչնչացումը:

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ (ՊԻ)

*ԱՆԳԼԻԱՅԻ ԴԻՐԶՈՐՈՇՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԽՆԴՐՈՒՄ
1913Թ. ԱՄՌԱՆԸ*

1. 1913թ. գարնանը՝ Հայկական հարցի վերաբացման շրջանում, քարենորոգումների իրագործման համար ծառայողներ վարձելու Թուրքիայի դիմումը, ուղղված անգլիական կառավարությանը, հանգեցրեց ռուս-անգլիական հակասությունների սրմանը: Բանն այն էր, որ անգլիական կառավարությունը ընդունել էր Թուրքիայի կողմից միայն Անգլիային հասցեագրված ժանդարմերիայի վերաբերյալ առաջարկը: Մտեղծված բարդ իրավիճակը շտկելու համար Անգլիան ստիպված էր համաձայնվել փոխզիջման. ա) հետաձգել անգլիական սպաների առաքումը Թուրքիա մինչև քարենորոգումների ընդհանուր նախագծի պատրաստ լինելը, բ) ընդունել Ռուսաստանի առաջարկը Արևմտյան Հայաստանի քարենորոգումների հարցը Կ.Պոլսում քննարկման դնելու վերաբերյալ:

2. Անգլիական կառավարությունը գտնում էր, որ հայկական քարենորոգումների գործում Ռուսաստանը կարող էր իր վրա վերցնել նախաձեռնությունը և առաջարկում էր քարենորոգումների խնդրի քննարկման և նախապատրաստման երկու տարբերակ: Այս առաջարկությունը չէր համապատասխանում Ռուսաստանի ծրագրերին: Ռուսաստանի արտգործնախարարը /գերադասել էր Անգլիայի առաջարկածից զանազանվող տարբերակ:

3. 1913թ. հունիսի սկզբին Ռուսաստանը Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի կառավարությունների

աշխատանքներում է հրավիրում Արևմտյան Հայաստանում խոստացված քարենեղոգությունների և դրանց իրագործման համար միջոցներ որոշելու անհրաժեշտության վրա: Նշված տերությունների կառավարությունները համաձայն էին զբաղվել Թուրքիայի հայաբնակ վիլայեթների քարենեղոգությունների հարցով և համապատասխան հրահանգներ էին ուղարկել Կ.Պոլսում իրենց դեսպաններին: Սակայն առաջարկությունը միանշանակ չէր ընդունվել տերությունների կողմից: Ֆրանսիական կառավարությունը պատրաստ էր առանց որևէ պայմանի կարգադրություններ ուղարկել Կ.Պոլիս: «Եռյակ միության» պետություններն իրենց համաձայնության դիմաց պայմաններ էին ներկայացնում. ա) չխախտել սուլթանի վեհապետական իրավունքներն ու պահպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, բ) Թուրքիայի ներկայացուցչի մասնակցությունը քարենեղոգությունների քննարկմանը: Եթե «Եռյակ միության» նման մոտեցումը ռուսական կառավարությունը բացատրում էր քարենեղոգությունների գործը ձախողելու նրանց միտումով, ապա Անգլիայի դիրքորոշումը պարզ չէր Ռուսաստանի համար: Ռուսաստանի առաջարկությունը ստանալուց հետո, անգլիական կառավարությունը չէր շտապում պաշտոնական հրահանգներ ուղարկել Կ.Պոլիս: Չնայած այս անհանգստացնող հանգամանքին, ռուսական կառավարությունը չմերժեց անգլիական ներկայացուցչիների կիսապաշտոնական մասնակցությունը քարենեղոգությունների նախնական նախագծի քննարկմանը Ամստամտի պետությունների ներկայացուցչիների կողմից:

4. Անգլիայի դիրքորոշումը հայկական քարենեղոգությունների վերաբերյալ ավելի էր հստակվում մինչ քոլոր վեց տերությունների խորհրդակցությանն անցնելը: Այն բոլորովին չէր համապատասխանում Ռուսաստանի շահերին և կրկին հանգեցնում էր հակասությունների սրմանը Անգլիայի և Ռուսաստանի միջև: Անհամաձայնությունների հիմնական պատճառները հետևյալն էին. ա) Թուրքիա անգլիական սպաների առաքման հարցը, որի վերաբերյալ Անգլիայի և Թուրքիայի միջև վերսկսված բանակցությունները ավարտվել էին Անգլիայի կողմից տրված համաձայնությամբ, բ) քարենեղոգությունների նախագծի մշակմանը Թուրքիայի մասնակցության օգտին Անգլիայի հանդես գալը:

5. Այսպիսով, Հայկական հարցը, որը 1913թ. հանգում էր Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու խնդրին, կրկին վերածվում էր մեծ տերությունների դիվանագիտական պայքարի առարկայի: Անգլիայի մտահոգվածությունը բարենորոգումների հարցում, փաստորեն, ձևական բնույթ ուներ: Նրա երկակի խաղը զգացվում էր արդեն իսկ Ռուսաստանի կողմից կատարված առաջարկից հետո: Անգլիան ցանկանում էր, որ բարենորոգումների խնդրում նախաձեռնությունը գտնվի Ռուսաստանի ձեռքում: Սակայն այս նախապատվությունը չէր բացատրվում դաշնակցի անկեղծ ցանկությամբ, այլ այն հանգամանքով, որ Անգլիան ձգտում էր ավելի խորը ներքաշել Ռուսաստանին Մերձավոր և Միջին Արևելքում խռոչ տերությունների միջև սրվող հակասությունների մեջ, դրանով իսկ հարված հասցնել Գերմանիային: Հենց այս հակասությունների զոհը դարձավ Հայկական հարցը:

ՂԼԵԶՅԱՆ ԳՆԵԼ (ՀՄԻ)

ՂՈՒԿԱՍ ԻՆՃԻՃՅԱՆԻ ՊԱՏՄԱՀԱՅԵՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ

ա) Ղուկաս Ինճիճյանը բողել է հսկայական գիտական ժառանգություն, որը դեռևս կարող է մանրագին ուսումնասիրության և անաչառ գնահատման: Նրա գիտական և հրապարակախոսական գործունեությունը կազմում է հայ մշակույթի զարգացման մի դարագլուխ:

բ) Ղուկաս Ինճիճյանը խորհրդահայ պատմագիտության մեջ ավելի շատ վկայակոչվել է, քան ուսումնասիրվել: Այդ առումով նրան ամենից շատ անդրադարձել է Ա.Կարինյանը, որի գնահատումները կրում են միակողմանի, իսկ ավելի շատ հարևանացի բնույթ:

գ) Ղուկաս Ինճիճյանի «Դարապատում» բազմահատոր աշխատությունը, որն արգասիք է տարիների տրմաշան աշխատանքի, հանդիսանում է նրա գիտական գործունեության յուրահատուկ գլուխգործոցը: Նրա մյուս աշխատությունների համակարգում «Դարապատումն»

ստանձնահատուկ է նրանով, որ այստեղ առավել ավարտուն տեսք ունի բազմահմուտ գիտնականի պատմահայեցողությունը:

դ) «Դարապատումը» որոշ վերապահումով կարելի է համարել 18-րդ դարի յուրահատուկ պատմական հանրագիտարան: Այն պեսք է համարել 18-րդ դարում ստեղծված ֆրանսիական՝ աշխարհում առաջին հանրագիտարանի շուրջ համախմբված լուսավորականների ազդեցության հետևանք:

ե) Հայոց նոր պատմության մեջ Ղուկաս Ինճիճյանն առաջինն էր, որ փորձեց ստեղծել համաշխարհային պատմություն՝ որոշակի հասցեատիրոջ՝ հայոց ազգի համար: Դա ամբողջովին նորություն էր, ուստի նրան կարելի է համարել հայ նոր պատմագիտության հիմնադիր:

զ) Հայ պատմագիտության մեջ առաջին անգամ Ղուկաս Ինճիճյանը շրջանառության մեջ է դրել բազմաթիվ պատմական նոր հասկացություններ: Դրանցից առավել կարևոր է քվում «ընդհանուր պատմություն» հասկացությունը, որն ավելի խորիմաստ բովանդակություն է ստանում, քան մալխկինում ստեղծված «տիեզերական պատմությունները»: Ըստ էության, նա ստեղծել է աշխարհաբար լեզվով առաջին պատմագիտական աշխատությունը:

է) Ղուկաս Ինճիճյանի շատ հայացքներ կրում են պայմանական բնույթ: Սակայն կա մի առանցքազաղափար, որը կարելի է համարել նրա աշխարհայացքի անկյունաքարը: Դա «ազգ» հասկացությունն է, որին նա ծառայեցնում է իր մնացած բոլոր գաղափարները, իր որոշ գործունեությունը, ինչի շնորհիվ էլ կարողանում էր իր համար ստեղծել ընթերցող հասարակություն:

ՂՈՒԼՅԱՆ ՅՈՒՐԻԿ (ԵՊՀ)

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՆԹՈՒՐԹԻԶՄԻ

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽՈՒՄ

1918-1920թթ.

1. 1908թ. գալով իշխանության գլուխ՝ երիտքուրքերը կարճ ժամանակ անց հրաժարվեցին պանթանալիզմից, գտնելով, որ այն իրեն չի արդարացրել և որդեգրեցին ավելի ռեակցիոն գաղափարախոսություն՝ պանքուրքիզմ և պանխիսմիզմ: Ըստ նրանց, այդ գաղափարախոսությունը պետք է իրականացվեր երկու էտապով: Առաջին էտապում Թուրքիան պետք է քրքանար: Այսինքն, եթե Թուրքիան քուրքերի հայրենիքն է, ապա մյուս ժողովուրդները կամ պետք է քրքանան կամ էլ ոչնչացվեն: Պանքուրքիզմի ճանապարհին առաջին գոհը դարձավ արևմտահայությունը:

Պանքուրքիզմի երկրորդ էտապը օղուգականությունն էր, որի իմաստը քուրքական ծագում ունեցող ժողովուրդների միությունն էր: Թուրքիան, Ադրբեջանը և Պարսկական Ադրբեջանը պետք է կազմեին վաղվա Օղուգիստանի կորիզը: Եթե պանքուրքիզմը ոչնչացրեց արևմտահայությանը, ապա օղուգականության համար պետք է ոչնչացվեր նաև արևելահայությունը:

2. Պանքուրքիզմի գաղափարների իրականացման ճանապարհին նպաստավոր պայմաններ ստեղծվեցին 1917թ.՝ հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքով կովկասյան ճակատի կազմալուծմամբ ու ռուսական զորքերի հեռացմամբ: Չճանաչելով Բրեստի պայմանագիրը, Անդրկովկասի Սեյմը Թուրքիայի հետ հաշտության կնքումը համարեց իր իրավասությունը: Տրապիզոնի և Բաթումի բանակցությունների ժամանակ բացահայտորեն դրսևորվեցին Թուրքիայի զավթողական նկրտումները և Անդրկովկասի պատվիրակության մուսուլման անդամների քրքամեա վարքագիծը: Թուրքիան հետևողականորեն ղնում էր Անդրկովկասի անկախացման խնդիրը: Արդեն 1918թ. ապրիլի 9-ին Սեյմը մեկշնչիկների և մուսուլմանների մեծամասնության ճնշմամբ կատարեց քուրքերի պահանջը: Մտանալով Անդրկովկասի անջատման լուրը, քուրքական զորքերը շարժվեցին դեպի

Անդրկովկաս:

3. Բաքույնի բանակցությունների ժամանակ թուրքերի ագրեսիվ դիրքորոշումը Հայաստանի հարցում գլխավորապես պայմանավորված էր այն արգելքով, որ վերջինս ուներ պանթուրքիզմի պլանների իրականացման ճանապարհին: Ղարաբաղի և մյուս հայկական գավառների խնդրում թուրքերին ավելի շատ մտահոգում էր ոչ թե Ադրբեջանի ճակատագիրը, այլ Օսմանյան կայսրության ազդեցության ոլորտի ընդլայնումը: Բաքումում թուրքերը բացելուց հայտարարում էին իրենց նպատակների մասին, այն է՝ ձեռք բերել Գանձակ տանող Կարս-Ախալքալար-Բորչալու-Ղազախ գիծը և Նախիջևան-Ջանգեզուր-Ղարաբաղ գծով Բաքու տանող ճանապարհը:

4. Պանթուրքիզմի գաղափարները պարարտ հող էին գտնում մոսավաքականների շրջանում: Հանձինս թուրքերի նրանք տեսնում էին իրենց շահերի ու ձգտումների գլխավոր պաշտպանին ու երաշխավորին: Թուրքիան իր հերթին ոչ առանց հիմքի համոզված էր, որ Ադրբեջանը կդառնա իր հենարանը Արևելյան Հայաստանը կուլ տալու և երկրամասում իր գերիշխանությունը հաստատելու համար:

1918-1920թթ. Թուրքիան և Ադրբեջանը միասնական ուժերով հնարավոր բոլոր միջոցներն օգտագործեցին հայկական հարցի լուծումը ձախողելու, Հայաստանը մասնատելու, հայկական «սեպը» վերացնելու ուղղությամբ: Օկուպացնելով Անդրկովկասը, թուրքերը անցան գործնական քայլերի, որոնք առաջին հերթին ուղղված էին հայաբնակ շրջանների դեմ: Դրա գագաթնակետը 1918թ. սեպտեմբերի 15-ի Բաքվի 30 հազար հայերի ջարդն էր: Հեթոք Ղարաբաղինն ու Ջանգեզուրինն էր: Սակայն պարտվելով աշխարհամարտում, Թուրքիան հեռացավ Անդրկովկասից: Բայց հեռանալուց առաջ նա իր հետևում բռնեց հազարավոր գործակալների՝ մոլի պանթուրքիստների, որոնք նոր պայմաններում շարունակում էին գործել նախկին եղանակներով:

Այս էտապում Անդրկովկասում պանթուրքիզմի դրոշակակիրն Ադրբեջանի հանրապետությունն էր, որի ոտնձգություններն ու դավադրությունները Հայաստանի Հանրապետության հանդեպ չդադարեցին ամբողջ 1918-1920թթ. ընթացքում:

ՄԱԼՈՅԱՆ ԱՐՄԱՆ (ՀՄԻ)

Գ.-Ա. ՕԼԻՎԻԵՐԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արևելքում եղած եվրոպացիներն այստեղի երկրների մասին բոլորի են քաղաքացույթ տեղեկություններ՝ դիվանագիտական զեկուցագրեր, ուղեգրություններ, հուշեր, դիտողություններ, առևտրական պայմանագրեր, կաթոլիկ միսիոներների զեկուցագրեր ու հաշվետվություններ, պատմական երկեր և այլն:

Եվրոպացի հեղինակների մոտ կան շատ օգտակար ու երբեմն էլ քացառիկ արժեք ունեցող նյութեր, որոնք վերաբերում են Արևելքի ժողովուրդների քաղաքական, հասարակական-տնտեսական պատմությանը, Եվրոպայի հետ ունեցած տարաբնույթ հարաբերություններին:

Մայն զեկուցման մեջ փորձ է արվում ներկայացնել 18-րդ դարի վերջին քառորդում Արևելքում ճանապարհորդած ֆրանսիացի հեղինակ Գ.-Ամատան Օլիվիեի ուղեգրությունը:

Նրա՝ դեպի Արևելք կատարած ուղևորության տալսվորությունները, նոթերը, դիտողություններն ամփոփված են «Voyage dans l'Empire Ottoman, l'Egypte et la Perse» («Ճանապարհորդություն դեպի Օսմանյան կայսրություն, Եգիպտոս և Պարսկաստան») 6-հատորյա աշխատության մեջ:

Թեև եվրոպացի հեղինակների ուղեգրություններում կան շատ արժեքավոր նյութեր, այնուամենայնիվ, նրանց ուղեգրություններն ըստ ամենայնի և արժանվույժ չեն ներառված գիտական շրջանառության մեջ:

Օլիվիեն իր նկարագրած դեպքերին մեծամասամբ ժամանակակից և սկանառես է, այնուամենայնիվ, նրա հաղորդած տեղեկությունները պետք է օգտագործել զգուշորեն և քննադատաբար: Օլիվիեի ուղեգրությանը միանշանակ զնախատական տալ չի կարելի, քանզի աշխատության մեջ կան և՛ օգուտաշատ, և՛ պակաս արժեքավոր տեղեկություններ:

ՄԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՄԵՆ (ԵՊՀ)

ՄՈՍԿՎԱ-ԵՐԵՎԱՆ-ԹԵՀՐԱՆ ԱՌԱՆՅԹԸ ՈՐՊԵՍ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ

Միջազգային կյանքի անցուդարձում միջազգային կազմակերպություններից զատ կարևոր դեր ու նշանակություն ունեն քաղաքական առանցքները: Առանցք ստեղծվ հասկանում ենք որոշակի զորքայ հիմնախնդիրների շուրջ փոխհամաձայնեցված դաշինքի ստեղծումը կոնկրետ երկրների կողմից, որոնց շահերը այդ հիմնախնդիրներում համընկնում են:

Անդրկովկասում առանցքների ստեղծման շարժառիթ և դրդապատճառ հանդիսացավ ԽՍՀՄ-ի փլուզումը, Ռուսաստանի ազդեցության քուլսցումը տարածաշրջանում և ուժերի վերադասավորությունը: Այս խնաստով հատկանշական է արագորեն ձևավորվող Տաշքենդ-Բաքու-Թբիլիսի-Կիև ՆԱՏՈ-յամետ առանցքը, որն ունի հստակ հակառուսական կողմնորոշում՝ Ռուսաստանին կտրել այս տարածաշրջաններում ընդարձակելու հնարավորությունից: Այս պայմաններում առաջանում էր դրան հակակշիռ, ռուսական կողմնորոշում ունեցող մոր առանցքի ստեղծման անհրաժեշտությունը, որը և հանդիսացավ Մոսկվա-Երևան-Թեհրան առանցքը:

Այս առանցքի ձևավորումը օբյեկտիվ էր և արամարանական, քանզի այս տարածաշրջանում Մոսկվան կոնկրետ հիմնահարցերի շուրջ դաշնակցային հարաբերություններ ուներ քե՝ Իրանի և քե՝ Հայաստանի հետ, ընդ որում, վերջինիս հետ՝ ռազմավարական դաշնակցային հարաբերություններ: Մյուս կողմից, գնալով զարգանում են Հայաստան-Իրան արտաքին առևտրական հարաբերությունները: Այս ամենի հետևանքով Մոսկվա-Երևան, Մոսկվա-Թեհրան և Երևան-Թեհրան եռանկյունին արամարանորեն պետք է վերածվեր Մոսկվա-Երևան-Թեհրան առանցքի:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ԱԻ)

ԲԻԱՅՆԻԼԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՁ

1. Բիայնական տերության կազմավորման սկզբնական տարածքի վերաբերյալ գիտական գրականության մեջ արտահայտված կարծիքները կարելի է բաժանել երեք խմբի: Ըստ առաջինի, այն գտնվել է Վանա լճի հարավ-արևելյան շրջաններում (երեք գերագույն աստվածների պաշտամունքային գլխավոր կենտրոնների, մայրաքաղաքի և Արարտու լեռան տարածաշրջանում): Կարծիքների երկրորդ խումբը կապվում է Արամու արքայի «թագավորական քաղաք» Արծաշքուի տեղադրության հետ (Մփրատի վերջին հոսանքի շրջան, Արճեշ կամ Արծկե քաղաք): Երրորդ կարծիքի համաձայն, այդ տարածքը եղել է Արարատյան դաշտը (կամ Այրարատ մահանգը), որի անվան աստրական տարրերակն է «Ուրարտու» երկրանունը: Նշված տեսակետներից ոչ մեկը, սակայն, առկա հարցերին չի տալիս սպառիչ պատասխաններ:

2. Խնդրի լուծման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի Շուրիլի երկրի տեղորոշումը: Բիայնական առաջին արքաների տիտղոսաշարում այն հանդես է գալիս Բիայնիլիից առաջ («արքա Շուրիլի երկրի, արքա Բիայնիլի երկրի...»), ինչը ցույց է տալիս վերջինիս նկատմամբ Շուրիլի երկրի ունեցած առաջնությունը: Բիայնական և ասուրական սկզբնաղբյուրների, ինչպես նաև լրացուցիչ այլ տվյալների համակողմանի քննությունը մեզ բերում է այն եզրահանգմանը, որ բիայնական տերության սկզբնատարածք Շուրիլի երկիրը գտնվել է Վանա լճից հարավ-արևմուտք, Կաշիարի լեռների շրջանում և համապատասխանում է ասուրական արձանագրությունների Շուր(ի)ա / Մուրա/Մուրիանի քաղաքին/ երկրին:

3. Ելնելով մեզ տեղորոշումից, կարելի է անել մի ենթադրություն, որը հետագա ուսումնասիրությունների ընթացքում կարող է հաստատվել կամ մերժվել: Նույն Կաշիարի լեռներում ասուրական աղբյուրները Ք.ա. 882, 879 և 866 թվականների դեպքերի կապակցությամբ հիշատակում են Թուրբուտի որդի Լապթուբու արքային, որն իշխում էր 60 ամբողջների: Տեղանքի

համընկնման, Լապթուրու և Լուքիայրի անունների հնարավոր նույնության (թ և պ բաղաձայնների դրափոխության դեպքում) հանգամանքները հաշվի առնելով՝ կարելի է ենթադրել, որ Սարդուրի Ա-ի հայր Լուքիայրին և Կաշխարի լեռներում իշխած Լապթուրուն նույն անձն են: Եթե այս ենթադրությունը հաստատվի, բիսյանական արքայացանկի առաջին մասը կունենա հետևյալ պատկերը. Թուրուսու (մինչև Ջ.ա. մոտ 885թ.), Լուքիայրի/Լապթուրու (Ջ.ա. մոտ 885-860/850թթ.), Սարդուրի Ա (Ջ.ա. մոտ 860/850-830/825թթ.), Իշպուհնի/Ուշպինա (Ջ.ա. մոտ 830/825-810թթ.) և այլն:

4. Ասուրական աղբյուրներում Ջ.ա. 859, 856 և 845թթ. հիշվող Արամու արքան, որն իրավամբ համադրվում է Հայկյան Արամի հետ, իշխել է Արարատ/ղի թագավորությունում՝ իր տիրակալության տակ միավորելով Հայկական լեռնաշխարհի հիմնական մասը, ինչի շնորհիվ էլ Ջ.ա. 9-րդ դարից սկսած Արարատ անվան ասուրական՝ Ուրարտու տարբերակը դառնում է լեռնաշխարհի ընդհանրական անվանումներից մեկը: Հետագայում Արարատ / Ուրարտու թագավորության տարածքը նվաճվում է Շուրիի-Բիսյանիի արքաների կողմից, որոնք, հասկանալիորեն, իրենց չեն վերագրում նվաճված տերության անվանումը (թեպետ միջագետքյան աղբյուրները նրանց ճանաչում էին իբրև Ուրարտուի տիրակալներ):

5. Բիսյանական տերության կազմավորման սկզբնատարածքի պարզաբանումն օգնում է հասկանալու ոչ միայն պետությանը տրված անվանումները, այլև մշակութային ժառանգության ու փոխազդեցության մի շարք հարցեր՝ կապված, հատկապես, խեթա-միտանիական աշխարհի հետ: Այն նպաստում է նաև Հայաստանի հնագույն պատմության բազմաթիվ այլ հարցերի լուսաբանմանը:

ՄԵԼԲՈՆՅԱՆ ՁԱՌԱ (ՕԼԻ)

*ԲԱՌԱԲԱՐԴՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ
ԵՎ ԹՈՒՐԹԵՐԵՆՈՒՄ*

(Ձուգորդական վերլուծության փորձ)

Նոր բառերի կազմության հիմնական միջոցներից է բառաբարդումը: Բարդ բառը միավոր է, որը կազմված է երկու կամ ավելի հիմքերից բառաբարդման ճանապարհով, և խոսքի հոսքում առանձնանում է իր կառուցվածքային ամբողջականությամբ:

Հայերենի բառաբարդման հարցերին անդրադարձել են Մ.Արեղյանը, Էդ.Աղայանը, Գ.Ջահուկյանը, Ս.Գալստյանը, Լ.Հովսեփյանը և ուրիշներ:

Հայերեն, անգլերեն, քուրքերեն լեզուների բառաբարդման համակարգերի զուգորդական ուսումնասիրությունը (մասնավորապես բարդ բառերի գոյական անուն պարունակող կադասյարների զուգորդումը) կարևորվում է ինչպես տեսական-լեզվաբանական, այնպես էլ մանկավարժական-ուսուցողական տեսանկյուններից. վերոհիշյալ լեզուներում բառաբարդման գործընթացների մասնությունների ու տարբերությունների վերհանումը կարող է նպաստել օտար լեզուների դասավանդման գործընթացին:

Կադասյարների բնութագրումը կապված է այն գործոնների հետ, որոնք օգտագործվում են բարդ բառերի դասակարգման ժամանակ: Հիմնական ուշադրությունը երկրադայիչ բարդ բառերի նկարագրության վրա դարձնելու նպատակով կազմվել են խոսքի մասերի աղյուսակներ և որոշվել է նրանց հնարավոր կապակցելիությունը:

Եթե յուրաքանչյուր խոսքի մաս կարողանաք կապակցվել մեկ այլ խոսքի մասի հետ և բարդ բառ կազմել, ապա կստացվեր 100-ից ավել բառաբարդական կադասյար: Ժամանակակից անգլերենում, հայերենում և քուրքերենում արդյունավետ կադասյար է N+N կադասյարը: Անգլերենում այս կադասյարով կազմված բարդ գոյականները՝ կոմպերսիայի ենթարկվելով՝ հաճախ հանդիսանում են մաև բայերի առաջացման աղբյուր: Հայերենում այս կադասյարով կազմվում են բարդ գոյականներ և նույնիսկ ածականներ:

Այս կաղապարով կազմված համադաս բաղադրիչներով բարդությունները հանդես են բերում մի շարք իմաստային առանձնահատկություններ: Թուրքերենում ևս շարահյուսական այս կաղապարով կազմվող բարդ գոյականների քիվը մեծ է:

Անգլերենում $A+N$ շարահյուսական կաղապարով կազմվում են բարդ գոյականներ, իսկ հայերենում նաև ածականներ, որոնք մեծ մասամբ ունենում են որոշիչ-որոշյալ փոխհարաբերությունը: Հաջորդ կաղապարը $V+N$ շարահյուսական կաղապարն է, որտեղ առաջին բաղադրիչը կոնկրետացնում է երկրորդ բաղադրիչի արտահայտված իմաստը: Դերանվանական բաղադրիչով կաղապարները շատ քիչ են քե՛ հայերենում, քե՛ անգլերենում, վերջինում նրանք կենդանիների սեռը ցույց տվող բարդություններ են: $N+A$ ոչ-շարահյուսական կաղապար է անգլերենում. սրանով կազմված բառերը գործածվում են գիտատեխնիկական և հրապարակախոսական գրականության մեջ:

Նույն հերթականությամբ ուսումնասիրվել են կաղապարներ, որտեղ առաջին բաղադրիչն է $N /$ գոյականը/: $N+V$ պրոդուկտիվ կաղապարով բայական գերադաս բաղադրիչով կազմվում են բարդ գոյականներ ու ածականներ անգլերենում և հայերենում:

Թուրքերենի դասավանդման գործընթացում նպատակահարմար է օգտագործել Նուրեթթին Ֆոշի լեզվաբանական դասագիրքը (Nurettin Koc, Yeni Dili bilgisi, Istanbul, 1990), որում արտացոլված են բուրբերենի բառաբարդման հարցերը, դասագիրքն օժտված է նաև բուրբերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն լեզվաբանական եզրերի համառոտ ուսումնական բառարանով:

ՄՈՒՇԵՂՅԱՆ ԱՐՄԵՆ (ԼԻ)

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԴԻՅԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Ուրարական դիցաբանի ամբողջական կազմն ընդգրկված է Մհերի դրան արձանագրության մեջ: Կողմնակի որոշ տվյալներ են մատուցում նաև

ուրարտական մյուս արձանագրությունները: Դատելով Միերի դռան երկայացրած ցանկից, դիցանունները դասակարգված են խիստ պատճառաբանված հաջորդականությամբ: Այստեղ յուրաքանչյուր դիցական միավոր զբաղեցնում է իր կայուն, ամրագրված տեղը:

Ուրարտական դիցարանի ուսումնասիրությամբ զբաղվել են բազմաթիվ արևելագետներ և հայագետներ դեռ անցյալ դարի կեսերից, ի քիսս որոնց՝ Ն.Ադունց, Գ.ր.Ղափանցյան, Բ.Պիոտրովսկի, Գ.Մելիքիշվիլի, Ն.Հարությունյան, Գ.Ջահուկյան, Գ.Վարդումյան, Ս.Հմայակյան: Նախորդների ուսումնասիրությունները, բացառությամբ Ս.Հմայակյանի, նվիրված են առանձին աստվածությունների կապերին, դրանց դիցական գործառնությունների լուսաբանմանը: Այսպես, շաքունակելով Գ.ր.Ղափանցյանի մոտեցումը, Գ.Մելիքիշվիլին փորձել է վերջնականապես տարբերակել իգական և արական աստվածություններին, Գ.Ջահուկյանը փորձել է հասկանալ սպարզել հայկական տարրի առկայության խնդիրը, այն, թե որքանով է հայկական տարրն ընդգրկված ուրարտական դիցարանի մեջ և այլն: Վերջին հետազոտության հեղինակը՝ Ս.Հմայակյանը, դիցանունները դասակարգում է առաջին, երկրորդ և երրորդ խմբերի մեջ, ըստ նրանց գերակայության և գործառնության կարեւորության:

1. Մեր ուսումնասիրության ելակետը դիցանունների լեզվական պատկանելության պարզաբանումն է՝ մախ և առաջ անունների կազմությունը վերլուծելու միջոցով: Այդ նպատակով պետք է ներառենք ինչքան հնարավոր է շատ դիցանուններ և փորձենք պարզել համակարգի մեջ դրանց փոխառնությունները և ներքին օրինաչափությունները, նախքան արտաքին համեմատական քննության անցնելը:

2. Հասարակական արժեքորում ստացող յուրաքանչյուր լեզվական իրացում որոշակի լեզվաբանական արգասիք է. դիցանունները, սակայն, հսկված են ավելի մեծ տարածման, քան սովորական անունները. տարածման և գործառնության այդ ոլորտը պայմանականորեն կարելի է անվանել դիցաբանություն:

Միանգամայն պարզ է, որ քննվող դիցաբանի կազմը գուրա ուրարտական լինել չէր կարող, ինչպես որ չէ հին աշխարհի՝ ոչ մի դիցաբան. որեւէ պետք է փնտրել այն դիցաբանները, որոնց մեջ որոշակի դեր է հատկացվել այս կամ այն դիցանվանը: Այստեղ կարող են փոխադարձորեն

օգտակար լինել և՛ լեզվական, և՛ արտալեզվական տվյալները:

3. Անվանական որոշակի կադասյար վերականգնելուց հետո պետք է վառձներ ուրվագծել դրանց գործառական հատկանիշները, այս անգամ հենվելով հիմնականում ոչ ուրարտական նյութի վրա: Այս ստումով օգտակար ծառայություն կարող են մատուցել ինչպես առասպելա-ծիսական գուգահեռներն ու տոմարական ցուցումները, այնպես էլ տեղանվանական արտացոլումները:

Այսպիսով, ծավալվող ուղղությունները երեքն են.

ա) անվանարանական-քառակազմական քննություն,

բ) աշխարհագրական տեղորոշում (սա էլ երկքնույթ է. տվյալ աստվածության անվան կցումը տվյալ աշխարհագրական վայրին և երկրորդ՝ տվյալ աստվածության պաշտամունքային վայրերը),

գ) դիցական գործառույթի սահմանում:

4. Մեր ուսումնասիրությունը բացահայտել է լեզվական ներդրումները՝ խոռո-ուրարտական, հայկական, խեթա-լուվական, սեմական և կովկասյան:

Անունների մեջ կան և՛ արմատական, և՛ բաղադրյալ կադասյարներ, ընդ որում, վերջիններս կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

ա) միածանց,

բ) երկածանց,

գ) երկրադրյալ բարդություններ:

ՄԻԶԱՅԵԼՅԱՆ ՏԻԳՐԱՆ (ԱԻ)

*ՍՏՐՈՒԿ-ՎԱՐՉԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ
IX-XI ԴԴ.*

Ղուլմների՝ ստրուկ վարձկանության ինստիտուտը, որի հետևանքով դեռ XI դարի սելջուկյան արշավանքներից շատ առաջ բյուրրական տարրը ներթափանցեց Մերձավոր և Միջին Արևելք, ձևավորվել է Աբասյան խալիֆաներ Մամունի (813-817) և Մուրասիմի (833-842) օրոք, երբ

Խորասանյան ջոկատները, որոնց շնորհիվ Աբասյաններն եկան իշխանության, մեծ մասամբ ցրվեցին և փոխարինվեցին հիմնականում քյուրքական ծագում ունեցող վարձկաններից կազմված գորամիավորումներով:

Արևելագիտական գրականության մեջ տարածված է այն կարծիքը, որ քյուրքական վարձու ռազմաջոկատների ներգրավումը խալիֆայության բանակներում արտացոլում է նրա տնտեսական բարգավաճման բարձր մակարդակը: Չհերքելով այս փաստը՝ պետք է նշել սակայն, որ դուրամական ջոկատների ներգրավման հետ կապված ծախսերը ծանր լծի պես ընկած էին պետության բյուջեի վրա: Աղբյուրները նշում են, որ միայն Սամարայում դուրամների վրա կատարված ծախսերը մեկ տարվա (867) ընթացքում կազմել են 200 միլիոն դինար, որը հնարավոր է ամբողջ կայսրության տարածքից հավաքված 2 տարվա խաբջին (հարկին): Նման գումարներ կարող էին հավաքվել միայն կառավարության կողմից հարուստ քաղաքացիներին հարկադրարար պարտադրելու միջոցով: Հետևաբար բանակում իրականացված ռեֆորմը, որն արտաքայտվեց ռազմական վարձկան ուժի ներգրավումով, հազիվ թե կարելի է տնտեսական բարգավաճման ցուցանիշ համարել ամբողջ կայսրության տարածքի համար:

Թյուրք ստրուկների զանգվածային զնումը (հիշատակություններ են պահպանվել այն մասին, որ Մամունի հրամանով Սամարղանդի ստրկավաճառության շուկայում զնվել են 3000 ստրուկներ) Աբասյան խալիֆների կողմից Շաշի, Իֆսիջարի, Սամարղանդի շուկաներում նույնպես կոնկրետ տնտեսական բարգավաճման ցուցանիշ չի կարելի համարել, քանզի խազարների դեմ խալիֆայության մղած մշտական պատերազմների, ինչպես նաև Մավերաննահիի և Խորասանի սահմաններում քյուրք ցեղերի դեմ Սամանյանների, Տափիքյանների (հետագայում մահ Լազենիների) վարած պատերազմների արդյունքում զգալիորեն մեծացավ քյուրք ստրուկների ներհոսքը խալիֆայության, ինչի հետևանքով, բնականաբար, նրանց զինը, արաբական մվաճումների սկզբնական շրջանի համեմատությամբ, որոշ չափով նվազեց:

Միևնույն ժամանակ պետք է նշել նաև այն փաստը, որ խալիֆները զգալի քանակությամբ ստրուկներ ձեռք էին բերում անվճար, այսինքն՝ նրանց

հաճախ նվիրաբերում էին ստրուկներ կամ ստանում էին որպես հարկ: Անհրաժեշտ է նկատի առնել նաև այն, որ X դարում կայսրության փաստացի տարրերի անկախացման և տրոհման հետևանքով զգալիորեն կրճատվեցին Բաղդադի կենտրոնական իշխանությանը տրամադրվող հարկերը, որի արդյունքում խիստ նվազեցին խալիֆների եկամուտները և նրանք սկսեցին ֆինանսական զգալի դժվարություններ կրել վարձու ռազմաջոկատների պահպանման հետ կապված ծախսերի հարցում: Իբն-ալ-Ասիրը նշում է, որ 940թ. խալիֆը ստիպված եղավ վճարել զորքին իր սեփական զանձարանից 500.000 դինար, երբ Բաղդադը տնտեսական և սոցիալական տեսակետից շատ դժվարին ժամանակներ էր ապրում: Համեմատության համար ասենք, որ, օրինակ, Հյուսիսային Աֆրիկայում Տուլունիդների դինաստիայի տիրույթներից ստացվող հարկերը կազմում էին ընդամենը 1.400.000 դինար:

X-XIIդդ. ընթացքում վարձավճարի ուշացման հետևանքով բյուրք զինվորները հաճախ խռովություններ էին քարծրացնում, ինչը շատ ծանր էր անդրադառնում Բաղդադի խաղաղ բնակչության վրա: Օրինակ, 1000 թվականին վարձավճարի ուշացման պատճառով բուխյան վեզիր Աբու Նասր Սաբուրի ղեմ խռովություն քարծրացրին բուխյան զվարդիայի բյուրքերը: Վերջիններս իրենց աջակցող Բաղդադի սուննի թաղամասերի բնակիչների հետ հարձակվեցին շիաների Կարխա թաղամասի վրա, որտեղ պատասպարվել էր վեզիրը: Սկսվեց կոտորած, որի արդյունքում երկիմղմանի բազում զոհեր եղան: Անկարգություններին վերջ դրվեց միայն այն ժամանակ, երբ բյուրքերին արվեցին վարձավճարները:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ բանակում դուրամական համակարգի ներմուծումը պայմանավորված չէր Աբասյան խալիֆայության տնտեսական քարզավաճմամբ և տնտեսական մակարդակի քարծրացման ցուցանիշ չէր, այլ որոշակի նպատակ հետապնդող քաղաքական քայլ, որն ուղղված էր խորասանյան ջոկատների քաղաքական նկրտումների և շահերի չեզոքացմանը:

ՌԱՄՄԱԶՅԱՆ ՍԱՄՎԵԼ (ԻԿԿ)

«ԶՅՈՌՕՂԼԻ» ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԷՊՈՍԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

«Զյոռօղլի» էպոսն ուշ ժամանակաշրջանի (17-րդ դ.) ստեղծագործություն լինելով հանդերձ՝ բյուրբական մյուս էպոսների և հերոսական ասքերի համեմատ, այնումեծապես, իր տարածվածության տեսակետից նախադեպ չունի: Այս վիպական-քանակախոսական յուրօրինակ հուշարձանը համընդհանուր ընդունելության է արժանացել Տյան-Շանից մինչև Բալկաններ, Կասպից ծովից մինչև Սիրիա՝ ամենատարբեր ազգերի շրջանում:

Էպոսի գրառումից ի վեր հետազոտողներին մշտապես զբաղեցրել են նրանում արտացոլվող իրադարձությունների և գործող անձանց, մանավանդ, Զյոռօղլու կերպարի պատմականության, էպոսի ձևավորման ժամանակաշրջանի և տարածաշրջանի հարցերը: Դրանք քննարկվել են անցյալ դարավերջի, դարասկզբի, ինչպես նաև ներկայիս բազմաթիվ հեղինակների աշխատություններում, որոնք, սակայն, մեծամասամբ համապարփակ բնույթ չկրելով՝ լիովին չեն լուսարանել ճշված հարցերը: Պատկերն այլ է, երբ շրջանառության մեջ են դրվում և վերլուծվում հայկական աղբյուրները:

Համեմատության համար պետք է նշել, որ անհրաժեշտ բավականաչափ տեղեկություններ օտար (թուրքական, պարսկական և այլ) աղբյուրներում չեն հանդիպում: Միայն 17-րդ դ. թուրք պատմիչ Էվլիյա Չելեբին է իր ուղեգրություններում հաղորդում Զյոռօղլու մասին որոշ տեղեկություններ, որոնք հիմնականում ադռա ահնարկներ լինելով՝ բազմաթիվ բյուրկարծիքների տեղիք են տվել: Առավել արժանահավատ, սակայն կրկին հստակածական տեղեկություններ պարունակում են Թուրքիայի պետական արխիվներում պահպանվող 1579-1595թթ. քվադրվող փաստաթղթերը:

Էպոսի հիմքում ընկած պատմական գլխավոր իրադարձություններն առնչվում են 16-17-րդ դդ. Օսմանյան կայսրությունը ցնցած ջալալիների ապստամբություններին, որոնց տարածման շատալիղն ի տարբերություն

արևելյան խմբերի տարբերակների (թուրքմենական, ուզբեկական, տաջիկական, դազախական և այլն)՝ ընդգրկում է հենց արևմտյան տարբերակների (թուրքական, հայկական, ադրբեջանական, քրդական, վրացական և այլն) ստեղծման ու ձևավորման տարածքը: Հատկանշական է, որ ունենալով կայուն պատմագրական ավանդույթ՝ տվյալ ժամանակաշրջանի հայկական բոլոր աղբյուրները (Առաքել Դավթիսեցու «Գիրք պատմութեանցը», Գրիգոր Դարանաղցի-Կամախեցու «Ժամանակագրությունը», Երեմիա Քյոմուրճյանի «Պատմութիւն համառօտ ԴՆ դարոյ Օսմանցոց քազաւորանցն» աշխատությունը, Ազարիա Սասնեցու «Ողբը», ինչպես նաև 16-18-րդ դդ. մանր ժամանակագրություններն ու ձեռագիր հիշատակարանները), ոչ միայն արժեքավոր տեղեկություններ են հաղորդում, այլև թույլ են տալիս պատասխանելու էպոսի ուսումնասիրության հետ կապված բազմազան հարցերի: Դրանցում առատ տեղեկություններ կան ինչպես Քյոռողլու, այնպես էլ էպոսի պատմական մախառխալեր ունեցող մյուս հերոսների (Գգիբօղլի Մուստաֆա բեկ, Քոսա Սաֆար, Թանդրի Թանխմազ, Դեյի Հասան և այլք) մասին:

Ընդհանրապես, տվյալ հարցին անդրադառնալիս հայ մատենագիրներից լավագույն դպրում նշվել են միայն Առաքել Դավթիսեցին և Եղիա Մուշեղյանը: Այնինչ, այդ կերպ անտեսվում են մանր ժամանակագրությունների և այլ աղբյուրների հեղինակները:

Չմայած Քյոռողլու և նրա զինակիցների վերաբերյալ հաղորդած տեղեկությունների հսկիրձ և ամփոփ լինելուն, ցայսօր էլ Դավթիսեցու երկը (17-րդ դ.)՝ կապված էպոսի ուսումնասիրության հետ, մնում է հնագույն վավերական և հավաստի աղբյուրը: Նշված ջալալի առաջնորդներին հիշատակում է նաև 17-րդ դ. հեղինակ Ավետիք ժամանակագիրը: Բացառապես Գգիբօղլի Մուստաֆայի վերաբերյալ հազվագյուտ տեղեկություններ է հայտնում Գրիգոր Դարանաղցին (Կամախեցի, 17-րդ դ.), որին մասամբ լրացնում են հենց իր խմբագրած 17-րդ դ. ժամանակագրությունը, 17-18-րդ դդ. մանր ժամանակագիրներն Վարդան Բաղիշեցին, Ղևոնդ Տոսպեցին, Հարություն Խալֆայանը և ուրիշներ:

Քոսա Սաֆարի վերաբերյալ ընդարձակ տեղեկություններ է հաղորդում 17-րդ դ. հայ տաղասաց Ազարիա Սասնեցին իր «Ողբում»:

Իր աշխատության մեջ Զյոտողլուն և Էպոսում հիշվող մյուս ջալալի առաջնորդներին հականե- հանվան հիշատակում է 17-րդ դ. քանաստեղծ և պատմագիր Երեմիա Ջյոմուրճյանը: Էպոսի հետ կապված քաղմազան արժեքավոր տեղեկություններ է հայտնում 18-րդ դ. հայ մատենագիր Եղիա Մուշեղյանն իր 1721 թ. Թավրիզում գրված “Գիրք խաղից երաժշտականաց” տաղաբանում, որը գրառված հաբակից մեկնաբանություններով ցայսօր էլ համարվում է Զյոտողլու մասին պատմություններ և երգեր պարունակող տեքստերից հնագույնը: Զյոտողլու մասին հիշատակում և խաղերից մեջբերում է անում նաև Հովսեփ Էմինն իր ինքնակենսագրական երկում (18-րդ դ.):

Միով բանիլ, «Զյոտողլի» էպոսի ուսումնասիրության քաղմազան հարցերի առնչությամբ հայկական աղբյուրները հաղորդում են արժեքավոր և հաճախ եզակի, հազվագյուտ տեղեկություններ: Ընդ որում, հենց դրանց հիման վրա կարելի է վերջնականապես եզրակացնել, որ ա) Էպոսում հիմնականում արտացոլված են 16-րդ դ. վերջին և 17-րդ դ. սկզբին Օսմանյան կայսրությունում բռնկված ջալալիների ապստամբությունները, հենց այդ դեպքերն են կազմում Էպոսի պատմական հիմքը, բ) Էպոսի քաղմաքիվ կենտրոնական կերպարները՝ Զյոտողլին և նրա զինակիցները միանգամայն իրական պատմական անձնավորություններ են. առկա են նրանց պատմական նախատիպերը, գ) Զյոտողլու խաղերը և նրա մասին գրույցները 17-րդ դ. առաջին կեսին արդեն իսկ ստեղծված և տարածված էին: Փաստորեն, Էպոսը սկսել է ստեղծվել և ձևավորվել 17-րդ դ. և հետագա ժամանակաշրջանում:

ԹՈՒՆԱԹՅԱՆ ԿԱՐԵՆ (ՊԻ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԱՅՈՒՅՅՆԵՐԸ

ՀԻՆ ԱՐԵՎԵԼԶԻ ՏՈՄԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

1. Օրացույցի տարբեր դասերի ծագման պատմությունը քաղաքակրթության ընթացքի ուղույն արտացոլումն է: Մարդու կենսական-կիրառական պահանջների աճի և ստեղծագործ ունակությունների

զարգացման շնորհիվ վաղնջական անցյալում առաջացել են ժամանակահատվածների ընկալման և չափման առաջին պարզունակ եղանակները՝ հիմնված կենսաբանական ու կենցաղային, երկրային ու երկնային երևույթների և գործունեության ժամանակային բնութագրերի վրա: Մ.թ.ա. VI-IV հազ. երկնային մարմինների շարժման հիման վրա կառուցված օրացույցները գերիշխող են դառնում, ուստի, պատմությանը հայտնի հազարավոր օրացույցների մեծամասնությունը դասդասում ենք ըստ աստղագիտական հիմքի. լուսնային (ԼՕ), լուսնաբեզականային (ԼԱՕ), լուսնաբեզականաժողորակային, աստղային և արեգակնային (ԱՕ):

2. Հին Արևելքում հայտնի էին բոլոր այս դասերի օրացույցները: ԼՕ-ը, ամենայն հավանությամբ, ստեղծվել է հնդեվրոպական նախահայրերիբրոմ, մինչև լեզվամիասնության առաջին տրոհումները՝ մ.թ.ա. V-III հազ. միջև: Այս են վկայում լեզվաբանական-գործառության վերլուծությունը և համեմատական տոմարագիտությունը, որոնք ԼՕ-ի տարբերակների ծագման, փոխանցման ու տարածման արեալների ուսումնասիրման միջոցով ուրվագծում են ճառագայթած քաշխում: ԼՕ-ի հենքի կատարելագործման շնորհիվ ձևավորված ԼԱՕ-ը մ.թ.ա. III-II հազ., դեռևս կիսավարտ վիճակում կիրառվում էր Շումերում, Բաբելոնում, Ասորեստանում և Հայաստանում: Մ.թ.ա. I հազ. այն ավարտում տեսք ստացավ՝ մշակվեց շակունների համակարգը, որը, բարդությամբ հանդերձ, մեծ ճշտություն էր ապահովում, ուստի և տարածվեց գրեթե ողջ Հին Աշխարհում: Իսկ մինչ այդ, Եգիպտոսում, մ.թ.ա. IV, և ըստ նորագույն հետազոտությունների՝ Հայկական լեռնաշխարհում IV-III հազ., աստղերի և Արևի դիրտմանների միջոցով և երկրագործական-նստակյաց կյանքի պահանջմունքներից բխելով՝ ծագել են պարզագույն ԱՕ-ները, որոնք հիմք դարձան Հույան (XVI դարից՝ Գ-քիզոքյան), այսինքն՝ այժմյան համընդունելի տոմարի և Բուն Հայոց Թվականի:

3. Հայկական օրացույցի պատմությունը բավականաչափ ուսումնասիրված է: Համարվում է, որ մ.թ.ա. III-II հազ. ունեցել ենք ԼՕ և ԼԱՕ, իսկ ԱՕ ենք կիրառել առնվազն մ.թ.ա. 457 թվականից: Սակայն, Մեերի դրան արձանագրության վերլուծությունը նշում է յուրօրինակ թվաբանական-տոմարական հենք, որ բնորոշ է ԱՕ-ին: Պետք է ընդունել, որ մ.թ.ա. IX-VI դդ.

հայոց տոմարն արդեն արեգակնային էր: Սա հաստատվում է քիմիական արքայական վահանների և Բաբալեթի բրոնզե սկավառակի նախշազարդման օրինաչափությունների քննությամբ: Ավելի վաղ, մ.թ.ա. XV-XIII դդ., խեթական աղբյուրներն են օրացույցին առնչվող տեղեկություններ հաղորդում. հայասական դիցաբանի աստվածների քիվը՝ 14, խեթերեն «արմա» (լուսին) և հայերեն «ամիս» բառերի աղերսը:

Հայաստանի մեզալիթների առնարագիտական ռաունմասիրությունը հավաստում է երկաթի և բրոնզի դարերում մեր օրացույցի զարգացման բարձր մակարդակը: Լռոի-բերդի մոտակա Կողես, Բասենի Արմալու գյուղերի և շատ այլ բրոնզեդարյան կրոնիկներ օրացուցային քվեր են հուշում: Մ.թ.ա. III հազ. սկզբին Մեծամորում դիտվել է Սիրիուսի ծագումը, որ կապված է Ամանոթի հետ: Զարահունճի (Սիսիանի շրջան) աստղադիտարանում XXV դ. հետևում էին պայծառագույն աստղեր Արկտուրի, իսկ IV հազ. սկզբին՝ Կապելլայի շարժումներին:

«Գլղզամեշ» էպոսում հիշատակվում են Արևի ընթացքի պահապան կարիճ-մարդիկ. սա առնչվում է Կարիճ համաստեղությանը և Արատտա երկրին: Եվբրպական աստղագետ-պատմաբանների հետազոտությունները վկայում են մեր լեռնաշխարհում III հազ. սկզբին աստղային-արեգակնային օրացույցի առկայությունը: Դրա ասպացույցն են նաև նախնայաց մշակութային բարձր մակարդակի հզոր կովան ժայռապատկերները (մ.թ.ա. VII-I հազ.) և հայոց տոմարին տրված հնաշունչ անվանումները՝ Հարեթյան, Թորգոմյան, Ասրանգյան, Հայկազյան և Արամյան:

Կենդանակերպի համաստեղությունների առանձնացման և անվանակոչման ժամանակի որոշմամբ, օրացույցում տարեսկզբի և արևադարձների տոներն հաշվարկմամբ, դիցաբանական, հնագիտական-ազգագրական և այլ նյութերի համակարգված վերլուծությամբ ցույց է տրվել, որ մեր լեռնաշխարհի բնիկները ԱՕ են կիրառել մ.թ.ա. VI հազ. կեսերից:

Ուստի վստահեքեն կարելի է պնդել, որ մեր ժողովրդի ստեղծագործության այս կարևոր ոլորտը՝ օրացույցը ևս եղել է առաջնային և վճռորոշ ազդեցություն բողի շրջակա երկրների և ազգերի ժամանակաչափ համակարգերի ծագման ու զարգացման վրա:

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ԱԻ)

«ԱՐՈՒԲԱՆԻ» ԴԻՅԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Արուբանին՝ Խաղի ասածու կինը, առանձնահատուկ տեղ է զբաղում վաճառ (քիայնական) դիցարանում: Աստվածների և աստվածուհիների մայրը լինելով հանդերձ, մա եղել է սիրո, պաղաբերության, ինչպես մաև արհեստներն ու արվեստները հովանավորող դիցուհի: Արձանագրություններում այս աստվածուհու անունն է 'A-a-ru-ba-a-ni-e, 'A-a-ru-ba-i-ni-e, U-a-ru-ba-ni-e, սրանցից բխեցվում են դիցանվան Յարուբանե, Արուբանե, Վարուբանե, Ուարուբանի ընթերցանւելը:

Ասորեստանյան աղբյուրներում Արուբանին հիշատակված է «Բագմաշտու» կամ «Բագրարբու» անունով և մույնացվում է Իշրար դիցուհու հետ: Մենք հավանում ենք այն տեսակետին, որ «Բագրարբու (Բագմաշտու)» անունը խորհրդանշում է դիցուհու պաղաբերության հատկանիշը և ընդունում ստուգաբանության bag («աստված») - bar («բերք») - tu (աբաղերենի իգական սեռի վերջավորություն) կամ bag («աստված») - mastos (հուն. «լանջ, կտրծք, ստիճք, մաև բլուր») առաջադրված ապրերակները:

Մենք գտնում ենք, որ «Արուբանի» դիցանունը ծագում է հնդեվրոպական *arbh, *rabb արմատից, որի ժառանգներն են՝ հայերենում արբանյակ - «ծառա, սպասավոր, օգնական, հետևորդ, ընկեր», սանս. arbh - «փոքր, քույր աղա», հայ. rabu [robu] - «ծառա, սպասավոր», rabota - «աշխատանք», ռուս. rabota - «աշխատանք», rab - «ծառա, սարուկ», raba - «աղախին», rebionok - «մանկիկ», հայեր. arbedi, անգլիս. carfob, գերմ. arbeit - «աշխատանք, եղություն»:

Արուբանի դիցուհին իր անվամբ և կոչմամբ կարծես ընդհանրացնում է *arbh, *rabb արմատի նշյալ զարգացումներն ու փոխակերպումները: Այսպես, Արուբանին գերագույն ասածու՝ Խաղիի կինն էր, կողակիցն ու ընկերը, օգնականն ու ծառայակիցը. դիցուհին իր ամուսնու արբանյակն էր՝ ուղղակի իմաստով: Հետաքրքիր է, որ Վանի բարբառում պահպանվել է ԱՐԲՆԻԿ - «օգնական» ձևը: Արբուանին, լինելով երկրագործության,

խաղաղագործության, զինեզործության և արհեստների հովանավորողը, հնարավոր է, որ աշխատանքը խորհրդանշեր ընդհանրապես: Դրան ավելացնելով մահ դիցարանի վառ արտահայտված հայրիշխանական ուղղվածությունը՝ կարելի է եզրակացնել, որ դիցուհին դիավել է մահ Խաղիի ծառա - աղախինը, սպասավորը: Դիցանունը հնարավոր է պահպանած լինի մահ մայրաստվածության ըմբռնումներին հատուկ սերնդի շարունակության ու պահպանության, մահ սիրտ հատկանիշները, որոնք արտահայտված են Արքուն-Արքունը - «չափահասություն» մահ «որբ» [հմմտ. arbh] բառերում:

Այսպիսով, «Արտարանի» փաստորեն նշանակում է ԱՐԲԱՆՅԱԿ՝ լայն ըմբռնմամբ՝ «ընկեր, օգնական, ծառայակից, ծառա, աղախին, կողակից», կապվում է մահ ԱՐԲՈՒՆԶ «չափահաս» իմաստի հետ:

ՎԻՐԱԲՅԱՆ ԴԱՎԻԹ (ԵՊՀ)

ՊԱՐՍԻՅ ԾՈՅԻ ՃԳՆԱԺԱՄԸ

1990թ. Իրաքը Իրանից իր գորքերի վերջնական դուրսբերումից 20 օր առաջ՝ օգոստոսի 2-ին անսպասելիորեն ներխուժում է Քուվեյթ և մի քանի օրվա ընթացքում բռնակցում այն:

Օգոստոսի 8-ին Իրաքը հայտարարում է Քուվեյթի վերջնական միացման մասին, Քուվեյթը հռչակվում է Իրաքի 19-րդ մահանգ: Դա տեղի է ունենում Սաուդյան Արաբիայի Ջիդդա քաղաքում բուվեյթ-իրաքյան բանակցությունների տապալումից անմիջապես հետո: Միջազգային համընդհանուր համար դա անընդունելի էր, և ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը մի շարք սրշումներ ընդունեց Իրաքի վերաբերյալ: Դրանցից թիվ 678-ում խոսվում էր տարածաշրջանում խաղաղության և անվտանգության վերականգնման համար բոլոր հնարավոր միջոցների կիրառման մասին: Եվ ահա 1991թ. միջազգային զինված ուժերը սկսում են «Փորձիկ անապատում» անվանումը կրող գործողությունը, որը տեղի է ունենում՝ սկսված հունվարի 17-ից: Քուվեյթի ազատագրումից հետո ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը ընդունում է թիվ 686 և 687 որոշումները հաշտության պայմանների և Ծոցի

ճգնաժամի կարգավորման ընդհանուր ուղիվագծերի վերաբերյալ: 1994թ. նոյեմբերի 10-ին Իրաքը վերջնականորեն ճանաչում է Զուվեյրի անկախությունը, նրա սահմանները և տարածքային ամբողջականությունը: Այդ ժամանակ մեծ դեր են խաղում մի կողմից ԱՄՆ-ի մարտական դիրքերը, մյուս կողմից՝ ռուսական դիվանագիտությունը: Իրաքում ստեղծվում են անվտանգության գոտիներ, որոնց վերահսկողությունը իրենց վրա են վերցնում ԱՄՆ-ի զվսավորած հակաիրաքյան կոալիցիայի զինված ուժերը: ՄԱԿ-ի որոշումների համաձայն արգելվում էր Իրաքից արտահանել ցանկացած տեսակի ապրանք, իսկ ներմուծել քույրատրվում էր միայն մթերք և դեղորայք, ինչպես նաև քաղաքացիական բնակչության հիմնական սպանանքները բավարարող ապրանքատեսակներ: ՄԱԿ-ի քիվ 715 որոշմամբ Իրաքի ռազմարդյունաբերությունը դրվում է երկարաժամկետ վերահսկողության տակ, ստեղծվում է հատուկ հանճարաժողով, որն իրականացնելու է իրաքյան մասսայական բնաջնջման զենքերի, նրանց պատրաստման համար հումքի ու տեխնիկական սարքավորումների բացահայտումը և ոչնչացումը: Օգտագործելով քրդական խմբակցությունների պայքարին իրաքյան զորքերի միջամտության առիթը՝ ԱՄՆ-ը հրքիռային հարվածներ է հասցնում իրաքյան ռազմական օբյեկտներին: Ռազմական ընդհարումների, իրան-իրաքյան պատերազմի և Շոցի ճգնաժամի ընթացքում, իսկ այնուհետև դրանց հետևած շրջափակման հետևանքով՝ երկիրն ընկնում է սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ: Խիստ նվազում է բնակչության կենսամակարդակը, իրեն զգացնել է տալիս սննդամթերքի և դեղորայքի պակասը: Սկսած 1996թ., ՄԱԿ-ը քույրատրում է Իրաքին տարեկան վաճառել 4 մլրդ. դոլարի մասի բնակչության համար ապրանքներ գնելու համար:

1997թ. սկսվում է Շոցի ճգնաժամի II փուլը: Դա տեղի է ունենում, երբ ՄԱԿ-ի հատուկ հանճարաժողովը ցանկանում է անցնել նախազանախան դրյակների ստուգմանը: Ս.Հունեյնը հայտարարում է, որ դա Իրաքի պատվի նվաստացումն է և ներողություն է հանճարաժողովի ղեկավար Ռիչարդ Բատլերին ԱՄՆ-ի օգտին լռեստության մեջ: Իրադարձությունները զարգանում են չափազանց կտրուկ և արագ: ԱՄՆ-ը նոր ռազմական ճնշման անհրաժեշտության մասին է հայտարարում, սակայն այս անգամ արդեն ոչ

բոլոր երկրներն են, որ անվերապահորեն պաշտպանում են ԱՄՆ-ի դիրքորոշումը, ամեն պահ թվում է, թե ռազմական բախումը անխուսափելի է, սակայն, ի վերջո, շնորհիվ Ռուսաստանի և Ֆրանսիայի դիվանագիտական ջանքերի, հնարավոր է դառնում կանխել երկրորդ ռազմական բախումը, որը հնարավոր է վերաճեր (ըստ որոշ քաղաքագետների) նոր համաշխարհային պատերազմի: Եզնաժամի պատճառով իրենց դիրքերը և միասնության միտումները խախտեցին արաբական երկրները, օգտվելով առիթից՝ ԱՄՆ-ը անցքեց ևս ռազմական ներկայությունը Պարսից ծոցում, իսկ ՕՊԵԿ-ը բավականին զիջեց իր դիրքերը: Իրարը թույլատրեց իր նախագահական նստավայրերի ստուգումը: Աշխատանքի ավարտից հետո հատուկ հանձնաժողովը ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդին ներկայացրեց իր զեկուցումը, որին ծանոթանալուց հետո Խորհուրդը հրաժարվեց չեղյալ հայտարարել Իրաքի դեմ ուղղված սանկցիաները: Որոշ քաղաքագետներ դա կապում են Իրաքի կողմից ՄԱԿ-ի կարգադրությունների ոչ բարեխղճ հետևման, իսկ ռմանք՝ միջազգային շուկայում նավթի գների իջեցման հետ: Ինչևէ, արդեն նույնիսկ ԱՄՆ-ի մարդասիրական կազմակերպությունների կողմից օգնություն է տրամադրվել Իրաք (դա ճգնաժամի կարգավորման գործում բավականին առաջընթաց քայլ է), սակայն Իրաքի դեմ ընդունված սանկցիաները դեռևս ուժի մեջ են, և քանի դեռ դրանք գոյություն ունեն, ճգնաժամը չնայած ստեղծված, բայց լիովին սպառված չէ, ուստի ժամանակը ցույց կտա, թե ինչպես և որ ուղղությամբ են զարգանալու հետագա իրադարձությունները:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ (ԱԻ)

ՄՈՍՈՒԼԻ ԽՆԴՐԻ

ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՅՄԱՆ ՓՈՐՉԵՐԸ (1926-1998 թթ.)

Մերօրյա բազմաթիվ կոմֆլիկտների և խնդիրների արմատները հասնում են մինչև մեր դարի 18-20-ական թվականները: Ներկայիս Հյուսիսային Իրաքի (Օսմանյան կայսրության Մոսուլի վիլայեթի) համար 1918-1926թթ. ընթացած

անգլո-թուրքական տարածքային և մավթային պայքարը ավարտվեց Անգլիայի հաղթանակով: 1925թ. դեկտեմբերի 16-ին Ազգերի Լիգայի խորհուրդը որոշում ընդունեց Մոսկվի մավթային վիլայեթը բաղնել Անգլիայի ենթամանդատային Իրաքի կազմում: Սկզբում Թուրքիան չընդունեց այդ որոշումը, սակայն ավելի ուշ հարկադրված էր գնալ փոխզիջման և 1926թ. հունիսի 5-ին ստորագրվեց անգլո-իրաքա-թուրքական պայմանագիրը. Թուրքիան համաձայնվում էր զիջել Մոսկվի վիլայեթը, փոխարենը Իրաքը պարտավորվում էր Թուրքիային զիջել Թուրքական մավթային ընկերությունից ասպագայում ստանալիք իր եկամտի 10%-ը: Սակայն Թուրքիան երբեք չմոռցավ Մոսկվ: Եղել են թուրք-իրաքյան անմախաղեսպ մերձեցման պահեր՝ 1937թ. Սաադապատի պակտը, 1955թ. Բաղդադի պակտը, փոխադարձ այցելություններ և համագործակցություն քրդական հարցում, սակայն Իրաքի թուլացման և Թուրքիայի դերի մեծացման ցանկացած շրջանում կամ Հյուսիսային Իրաքում իշխանության վակուումի առաջացման պայմաններում (2-րդ աշխարհամարտի տարիներին, 1958թ. Իրաքում հուլիսյան հեղափոխությունից հետո, 1974թ.-ի Կիպրական իրադարձություններից և 1980թ. Թուրքիայի սեպտեմբերյան հեղաշրջումից հետո, ինչպես նաև իրանա-իրաքյան և Պարսից ծոցի պատերազմներից հետո, երբ Հյուսիսային Իրաքում առաջացավ իշխանության վակուում) Թուրքիայում ակտիվացել են ռևանշիստական արամադրությունները Մոսկվի (Հյուսիսային Իրաքի) նկատմամբ: Խնդիրը լուսաբանելիս պետք է ուշադրություն դարձնել մի շարք կարևոր կետերի վրա.

1. Թուրքիայում ռևանշիստական տրամադրությունների աճը Հյուսիսային Իրաքի նկատմամբ, պահի պատենությունից և իրատեսությունից ելնելով՝ Թուրքիայի ձգտումը առնվազն փաստացի վերահսկողության տակ պահել Հյուսիսային Իրաքը,
2. Իրաքում Զրդական ինքնավարության ստեղծումը և նրա դերի փոքրացման ձգտումներն ու միտումը,
3. Թուրքական բանակի մշտական ներխուժումները Հյուսիսային Իրաք, վերջինիս նպատակները, Իրաքի և մեծ տերությունների դիրքորոշումը ինչպա խնդրի նկատմամբ,
4. Թուրքիայում տեղաբաշխված ՆԱՏՕ-ի (հիմնականում ԱՄՆ-ի)

նազմական կոնստիգենտի խնդիրը,

5. Հյուսիսային Իրաքի հեա «Ֆեդերացիայի» և «ամփոսագոթյան բուֆերային գոտու» ստեղծման Թուրքիայի նպատակները (այդ նպատակով Թուրքիան պետք է ապացուցի, որ միջբրդական անհամերաշխության ներկա պայմաններում Քրդական ինքնավարությունն իրեն չի արդարացնում և չի սպառնալու ամփոսագոթյունը): Թուրք հեղինակ Այլա Անթեփլին գտնում է, որ Մոսուլի նկատմամբ ռեանշիստական տրամադրությունները և ցանկությունը՝ կիրառել «Կիպրական մոդելը» նաև Մոսուլի նկատմամբ, Թուրքիայում սկիզբ են առնում 1980թ. սեպտեմբերի 12-ից, այսինքն՝ Թուրքիայում տեղի ունեցած հերթական ռազմական հեղաշրջումից հետո: Միաժամանակ պետք է նշենք, որ 1983թ. մայիսին տեղի ունեցավ մի միջադեպ, որը միջազգային հանրությունն անվանեց «արկածախնդրություն 83», իսկ Թուրքիան՝ «սահմանափակ օպերացիա»։ Թուրքական բանակը, անցնելով Իրաքի սահմանը և խորանալով իրարայան տարածքում, ռազմական գործողություններ սկսեց բարդ ապստամբների և խաղաղ բնակչության դեմ: Հետագայում՝ հատկապես Պարսից ծոցի պատերազմից հետո, վերոհիշյալը կդառնա սովորական երևույթ:

Ինչ վերաբերվում է Պարսից ծոցի պատերազմից հետո ստեղծված Քրդական ինքնավարությանը, ապա թերևս զուգահեռականներ պետք է անցկացնել ոչ այնքան Շեյխ Մահմուդի ժամանակաշրջանի հետ, որքան 1970-1974թթ. (1974թ.-ի մարտի 11-ին իրաքյան իշխանություններն ընդունեցին «Քրդական ինքնավար շրջանի» մասին թիվ 33 օրենքը): Երկու դեպքում էլ Իրաքը թույլ էր, Հյուսիսային Իրաքում կար իշխանության վակուում, երկու դեպքում էլ ինքնավարությունը պահանջվում էր ներքին, սակայն տրվեց վերևից և տալու պահից իսկ սկսած նկատվեց այդ ինքնավարության դերի և նշանակության փոքրացման ձգտումն ու միտումը: Տարբերությունը թերևս այն է, որ Պարսից ծոցի պատերազմից հետո բրդական խնդիրն Իրաքում միջազգայնացվեց:

Իրաքյան վերջին իրադարձությունների «նորույթը» նրանում է, որ այն լավ մոտացված էին նաև էր (այդ թվում և Թ.Օզալի առաջարկած ֆեդերացիայի գաղափարը, որը սկիզբ է առնում դեռ Զեմալի ժամանակաշրջանից, ինչպես նաև արագ կոմունիզմի մոտեցիկ տեղարաշխման գաղափարը, որը սկիզբ

էր առնում 80-ական քվականներից և պետք է ուղղված լիներ ԽՍՀՄ-ի դեմ. ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նրա դերը վերագնահատվեց): Չնայած պաշտոնական ոչ մի փաստաթղթում Թուրքիան չի նշել Իրաքի նկատմամբ տարածքային հավակնությունների մասին, ավելին՝ հերքել է այդ մասին եղած պնդումները, պետք է նշել, որ զանազան մամուլ ասուլիսներում ու հարցազրույցներում Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնյաները բարձրացրել են Մոսկվի «խնդիրը» (նախագահներ Քեմալ Էվրեմը, Թուրգուք Օզալը, Սուլեյման Դեմիրելը, նախկին վարչապետ Թամսու Չիլլերը, պաշտոնարարող դիվանագետ Նուրի Էրեմը):

Այսպիսով, Հյուսիսային Իրաքի ներկայիս իրադարձությունների հիմքում այդ նույն կարգավորված ու «մոռացված» Մոսկվի խնդիրն է, որի վերակենդանացման փորձեր են արվում Թուրքիայի կողմից: Պատճառը և առիթը իշխանության փակույդն է Հյուսիսային Իրաքում:

ԱՌԱՔԵԼ ՅԱՆ ԱՐՍԵՆ (ԵՊՀ)

ԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻՆ ՎԵՐԱՔԵՐՈՂ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Արաբերեն խոսքի շարահյուսական կառույցները բաժանվում են երկու հիմնական խմբերի՝ բայական ու անվանական: Այս բաժանումը հստակորեն հիմնավորվել է արաբ միջնադարյան քերականագետների աշխատություններում՝ ազ-Ջամախշարիի, Իբն Ալիլի, Իբն Հիշամի և ուրիշների ստեղծած քերականական կոնցեպցիաների շրջանակներում: Դիշա է՝ այս երկու հիմնական խմբերից բացի Արաբական լեզվաբանական ավանդույթը (ԱԼԱ) և, մասնավորապես, ազ-Ջամախշարին (12դ), առանձնացրել է ևս երկու կառույցների տիպ՝ պարագայական ու սլայմանական, որոնք առանձնանում են վերոհիշյալ հիմնական տիպերից միայն հաղորդակցական տեսակետից ելնելով և օգտագործվող լեզվային միջոցներով:

2. Արդի լեզվաբանության մեջ մեծ տեղ են տալիս այս կառույցների ինչպես ներքին, այդպես էլ արտաքին կառուցվածքի բացահայտմանը, փորձեր են կատարվում սահամանել դրանց գործառական դիրքերը, նկարագրության մեջ օգտագործելով նոր մեթոդներ: Ժամանակակից լեզվաբանության զարգացման մակարդակը բույլ տվեց հստակորեն սահմանել անվանական ու բայական կառույցները, հիմնվելով ինչպես կառուցվածքային, այդպես էլ իմաստաբանական յուրահատուկ հատկանիշերի վրա: Բնական է, որ մնան հարցերի լուծումը չի կարելի որոնել բացառապես արարերեն խոսքի երևույթների նկարագրման շրջանակներում, քանզի դա ընդհանուր առմամբ շոշափում է հոգեբանության ու մարդկանց լեզվային գործունեության ոլորտները և պահանջում արամաբանական մեխանիզմների հստակեցում ու ընդհանուր հաղորդակցման մեթոդների հետ հարաբերակցության ուղիների ճշտգրտում: Սակայն այս առումով արարերենի կառուցվածքային համակարգին վերաբերող որոշ տիպիկ երևույթների հետազոտումը ակնկալում է վերեփշյալ ոլորտներում իրադրության պարզեցում:

3. Անվանական ու բայական կառույցներն ունեն իմաստաբանական կատեգորիաների շարահյուսական տարբեր դրսևորման միջոցներ, ինչը անշուշտ բխում է զանազանվող կառուցվածքային համակարգերի ու տարրերի փոխկապակցվածության սկզբունքներից: Մի դեպքում մենք կարող ենք դատել գործողության, գործընթացի կամ բայական այլ իմաստաբանական հատկանիշների ժամանակահատվածում տևականության մասին (համաձայն ենթատեքստի ներքին պահանջի), ինչը իրագործվում է քերականական հատուկ ցուցիչների միջոցով, իսկ մյուս դեպքում՝ գործընթացին հաջորդող (կամ նախորդող) իրերի դասավորության, արդյունքի, պատճառի, հատկանիշի, որակի և այլնի (ենթատեքստի պահանջներից ելնելով) ժամանակային տեղայնացվածության մասին:

4. Եթե արարերենի բայական տիպի կառույցները բնորոշվում են ստորագման հատուկ դրսևորմամբ, ինչը իրականանում է առավելապես բայական տարրի ու դրան շրջապատող անդամների միջոցով, ապա անվանական կառույցների ստորագման դրսևորումը իրականանում է ավելի բազմատեսակ շարահյուսական ու կառուցվածքային մոդելների միջոցով:

Անվանականների շարքին ԱԼԱ-ը վերագրում է նույնպես բայական կառույցներին հատուկ «գործողություն» կամ «գործընթաց» արտահայտող ոչ բայական տարրերը ներառող կառույցները, որոնք հատուկ դիրքեր են զբաղում շարահյուսման մեջ ու իրականացնում են իմաստաբանական տեսանկյունից անվանական կառույցների համեմատ զանազանվող ստորոգման դրսևորում: Դա պայմանավորված է բայանման տարրերի (ներկայացված մասդառային ու դերբայական ձևերով) իմաստաբանական դաշտի հատկանիշերով, ինչը բույլ է տալիս ճբակավորել այս տիպի տարրերը ներառող կառույցները անվանական ու բայական կառույցների համակարգում իրրև միջանկյալ օղակ, որոնց ձևափոխման ուղղիները զգալիորեն զանազանվում են այլ կառույցներից:

5. Բնական է՝ վերը նշած բոլոր տեսակի կառույցների ձևափոխման ու լրացուցիչ շարահյուսական միջոցներով համալրման սկզբունքները տարրերվում են միմիանցից, բայց և այնպես լեզվային հնարավոր տարրերակները հանդուրժում են նույն իմաստաբանական-գործառական դաշտի արծարծումը՝ դասակարգման տարրեր մակարդակներ ներկայացնող կառուցվածքային միավորների միջոցով, քանզի հետագա նշանակության ճշգրտումը հնարավոր է իրականացնել լրացուցիչ շարահյուսական միջոցներով: Այդպես՝ «գործողություն» և «օրյեկտ» հասկացությունների արտալեզվական հարաբերակցության խոսքային արտացոլումը կարող է ներկայացվել ինչպես ստորոգյալ ու խնդիր պարունակող պարզ բայական կառույցի, այդպես էլ կրավորակաճություն արտահայտող ստորոգյալն ու փոխենթակա (na'ibu-l-fa'il) պարունակող կառույցի և, վերջապես, հատկացուցչական (af-idafa) տիպի կառույցների միջոցով, եթե հատկացյալ անդամը նույնպես ներկայացնում է «գործողություն» կամ «գործընթաց» հասկացությունների առարկայացված ձևը: Տվյալ դեպքերում փոփոխությունների է ենթարկվում միայն շարահյուսական արտաքին (ֆորմալ) միջոցների դրսևորումը և շարահյուսման մեջ կառույցի գործառական դիրքը:

Այսպիսով, այս վերլուծության առարկան է արաբերեն լեզվի հաղորդակցման հիմնական միջոցների ներքին շարահյուսական կապերը, ձևաբանական տարրեր դասակարգերի միասնականության հիմնավորումը

ըստ դրանց շարահյուսման ընդհանուր օրինաչափությունների, խոսքային շարույթների իմաստային արտահայտման նմանությունների:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԵԿԱՏԵՐԻՆԱ (ԵՊՀ)

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՋՐՀԵՂԵՂԻ ԱՌԱՍՊԵԼԸ ԸՍՏ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԵՎ ՂՈՒՐԱՆԻ

Աստվածաշունչն ու Ղուրանը համեմատելիս ակնհայտ են դառնում նրանց միջև գոյություն ունեցող սյուժետային նմանությունները, որոնք պայմանավորված են արար և հրեա ժողովուրդների համատեղ պատմա-ծագումնաբանական ընդհանրություններով: Սուրբ գրքերի համապատասխան հատվածները վերլուծելիս ի հայտ են գալիս ոչ միայն նրանց ընդհանուր գծերը, այլև տարբերությունները, որոնց հիմնական պատճառն է հանդիսացել սեմական ժողովուրդների վաղ բաժանումը և հետագա զարգացման տարբեր ուղիները: Հարկ է նշել, որ այդ տարբերություններով հանդերձ, ընդհանուր ծագումն ու վաղնջական շրջանի համատեղ կյանքը մեծ ազդեցություն են թողել վերը նշված ժողովուրդների վրա: Դրա վառ ասպացույցն են Աստվածաշունչում և Ղուրանում դիտարկված ընդհանուր սյուժեները, ի թիվս որոնց հարկ է նշել մարդկության արարման, համաշխարհային ջրհեղեղի առասպելները, Աբրահամի և Հովսեփի ավանդազրույցները, Մովսեսի և Հիսուսի կյանքին վերաբերող պատմումները և այլն: Մենք համագամանքեն կանդրադառնանք այդ սյուժեներից մեկին՝ համաշխարհային ջրհեղեղի առասպելին:

Այս վերլուծությունից կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

1. Աստվածաշունչի և Ղուրանի սյուժեների մեծամասնությունը բացառիկ չեն և մեծ մասամբ ունեն իրենց նախատիպը հնագույն ավանդույթներում (Նոյի ավանդազրույցի օրինակով):
2. Ջրհեղեղի առասպելի սյուժետային առանցքը Սուրբ գրքերում նույնն է, ինչը սեմական ժողովուրդների համատեղ ձևավորման և երկարատև միասնական կյանքի արդյունք է:

3. Ինչպես Աստվածաշնչում, այնպես էլ մասնեղականների Սուրբ գրքում առկա են բազմաթիվ տրամաբանական հակասություններ, որոնցից մի քանիսը կարծարծվեն տվյալ զեկուցման մեջ:

Եվ ի վերջո նշենք, որ այդ ընդհանրությունների հանգամանալից ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռնի ոչ միայն փոքրիշատե ծանոթանալու Գրքերի էիմնական հատվածներին և որոշակի պատկերացում կազմելու նրանց հեղինակ ժողովուրդների մասին, այլև ակներև դարձնելու նրանցում տեղ գտած անճշտություններն ու թերությունները:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄՆԱՅԱԿԱՆ (ԵՊՀ)

ՆԱԽԻԶԵՎԱՆ ԳԱՎԱՌԸ IX-Xդդ.

/ըստ արաբական աղբյուրների/

Արաբական նվաճումներից հետո զգալիորեն մեծացավ արաբների հետաքրքրությունը լսալիֆայության հպատակ ժողովուրդների պատմական անցյալի հանդեպ:

Արաբական միջնադարյան աղբյուրները փաստական արժեքավոր և եզակի նշանակություն ունեցող նյութեր են պարունակում մաև Հայաստանի, հայերի, այդ թվում՝ Նախիջևան գավառի մասին:

Միջնադարյան Հայաստանի սոցիալ - տնտեսական և վարչա - տարածքային բաժանումների մասին ուշագրավ և հույժ կարևոր տեղեկություններ են հաղորդում հատկապես IX-Xդդ. արաբալեզու աշխարհագիրները՝ Իբն Խորդադեհը, ալ-Իստախրին, Իբն Հաուկադը, Իբն ալ-Ֆակիհը, ալ-Յակուբին, ալ-Մատալին, Աբու Դուաֆը և այլք:

Ինչպես նշել է Յակուբ ալ-Համավին Նախիջևանը «քաղաք է Աղբրեջանում, ռմանք ասում են Առանում, Արմինիայի սահմանի վրա»: Այս գավառը Արմինիա վարչա - տարածքային բաժանմամբ համարվել է Երբոռը Արմինիայի մաս:

Ինչպես հայտնի է, Օմայանների օրոք՝ արաբա - բյուզանդական կռիվների ընթացքում, զորահրամանատար Մուհամմադ իբն Մարվանը

ներխուժեց Հայաստան և վերջնականապես այն զբաղեց 701 թվականին: Հայաստանը, Զարքին, Աղվանքը, Շիրվանը և Դեբրեկդը /Բար ալ-Աբուար/ զբաղվեցին արարների կողմից և միավորվեցին մեկ փոխարքայության մեջ, որը Հայաստանի անունով կոչվեց Արմինիա: Արմինիայի արար կառավարչի նստավայրը Դվին քաղաքն էր:

Նախիջևան գավառը մինչև VIII դարի սկիզբը գտնվում էր Վասպուրականի կազմում: Սակայն, Հարիր իբն Մասլամայի Հայաստան արշավելուց հետո այս, ինչպես նաև Գողթն գավառները դուրս բերվեցին Վասպուրականի կազմից: Սակայն, ու՞մ են անցել դրանք, ո՞ր նահանգի կազմի՞ մեջ են մտել, պարզ չէ: Ենթադրվում է, որ VIII դարում, Վասպուրականի կազմից դուրս բերվելուց հետո, Նախիջևանը մտել է Սյունիքի կազմի մեջ, սակայն նման փաստի մասին չի խոսվում ո՛չ արաբական և ո՛չ էլ հայկական աղբյուրներում:

Պետք է ենթադրել, որ այս երկու գավառները եղել են առանձին միավորներ և այնտեղ իշխել են արաբական գորավարները:

Այդ մասին վկայում են եղած այն հատուկներտ վկայությունները, որոնցից մեզ հայտնի է, որ Նախիջևանում գտնվում էին արաբական զորքեր և արաբ բնակչություն, իսկ ավելի ուշ այստեղ առաջանում է արաբական էմիրայություն :

Այս գավառը արաբական աղբյուրներում հանդես է գալիս մի քանի ձևով «Նաշավա», «Նակջավան», «Նաշվա»: Պետք է ենթադրել, դատելով ըստ արաբական աղբյուրներում ընդունված ավանդության, սա գրչական սխալ է, հարցերի չիմացության ու տեղանունների մեջ խառնամուխ չլինելու արգասիք:

IX դարի երկրորդ կեսից Հայաստանն ապրեց անտեսական մոտ զարգացում: Բագրատունյաց դարաշրջանի այս զարգացումը առաջին հերթին երևում է արաբ հեղինակների աշխատություններում, որտեղ նրանք Հայաստանը համարում էին արաբական խալիֆայության հարուստ երկրներից մեկը: Հայաստանի այս զարգացումը պայմանավորված է առաջին հերթին առևտրական կապերի զարգացմամբ: Համաձայն արաբական, հայկական և բյուզանդական աղբյուրների վկայությունների, Հայաստանը հանդես էր գալիս որպես տարանցիկ երկիր:

Արաբ աշխարհագիրները շատ մանրամասնորեն նկարագրում են

համարյա բոլոր առևտրական ճանապարհները: Նախիջևանը զանվում էր Դվինից դեպի արարական խալիֆայության և Բյուզանդական կայսրության մեծ առևտրական կենտրոններ տանող ճանապարհի վրա: Առևտրական այդ ճանապարհի շնորհիվ Նախիջևանը սպյրեց քավականին մեծ զարգացում:

Փաստորեն, Նախիջևանն իր դիրքով արարներին հետաքրքրել է ոչ միայն որպես վառչական միավոր, այլ նաև որպես ռազմական և առևտրական նշանակություն ունեցող գավառ:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԵ (ԵՊՀ)

ԽԱՉԱԿՐԱՅ ՇԱՐԺՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

1. Խաչակրաց առաջին արշավանքում արտացոլված էին քրիստոնեական աշխարհի բազմաթիվ ժողովուրդների, իշխանությունների և սոցիալական խմբերի տարարնույթ շահերն ու հետաքրքրությունները, որոնք ներդաշնակորեն միահյուսվում էին շարժման ընդհանուր գաղափարախոսական հիմնավորման մեջ: Պատմական այս իրողությամբ է պայմանավորված շարժման վերագրային, համահվորպական, հետագայում նաև համաքրիստոնեական բնույթը:
2. Խաչակրաց շարժման գաղափարախոսության ձևավորումը սկսվեց Գրիգորիոս VII պապի օրոք, նրա արևելյան արշավանքի նախագծի շրջանակներում, երբ Արևելքում տեղի ունեցող պրոցեսներին լատինական միջամտության անհրաժեշտությունը հիմնավորվում էր պապականության քաղաքական նպատակների վերլուծությամբ: Գրիգորիոս VII-ի հավատացյալ ժողովրդին, քրիստոնեական աշխարհի բարձրաստիճան աշխարհիկ և կրթական գործիչներին ուղղված նամակներում և դիմումներում շրջանառության մեջ դրվեց անդրծովյան քրիստոնյաների փրկության, համաքրիստոնեական միասնության խնդիրները, որոնց իրականացման խորհրդանիշը պետք է դառնար Երուսաղեմի ազատագրումը:
3. Անդրծովյան արշավանքի գաղափարախոսական նախապատրաս-

առումը՝ Ուրբանոս II-ի քահանայապետությամբ՝ նշանավորվեց շեշտադրումների որոշակի փոփոխությամբ: Ի տարբերություն սեփական քեռկրատական նկրտումներով կաշկանդված Գրիգորիոսի կոչերի, որոնք ավելի շատ հրահանգներ են հիշեցնում, Ուրբանոսի դիմումներն ու ճառերը շատ ավելի ընդարձակ և հիմնավորված են Սուրբ Գրքի վկայություններով: Եթե Գրիգորիոս VII-ը հենվում էր Ավետարանի մեկ-երկու մեջբերումների վրա, որոնք, շեշտվելով եղբայրական սիրո թեման քիչ էին առնչվում ապագա արյունահեղությանը, ապա Ուրբանոս II-ն ուղղակի դիմեց Հին Կտակարանի ավանդույթներին և կերպարներին: Քրիստոնեական համերաշխության սիրտ փոխարեն պապն առաջ քաշեց «Ավետյաց երկիրն» ազատագրելու հրեա ժողովրդի մարգարեների խոսքերը և Դավիթի սաղմունքը:

4. Ծավալվող դեպքերի աստվածաշնչային կոնտեքստում դիտարկումը Ուրբանոսին հնարավորություն է ընձեռնում, առանց քաղաքական նպատակների քացահայտման, պարզ համրամատչելի ձևով ներկայացնելու Աստծո քշմամիներին պատժող անդրժողկան արշավանքի անհրաժեշտությունը: Արդյունքում պապն ամբողջովին նույնացնում էր արևելյան քրիստոնյաներին Իսրայելի զավակների հետ, որոնց մշտապես զորակցել է Աստծո երկնային զորքը: Արևմտյան քրիստոնյաները հենց այդ երկնային զորքը պետք է դառնային, որոնք իրենց զործունեությամբ կոշված էին իրագործելու Աստծո կամքը:

5. Ապագա պատերազմի նմանօրինակ ընկալումով էր պայմանավորված խաչակրաց շարժման խորհրդանիշների ընտրությունը: Թշնամիների արյունով հագուստները զարդարելու պատգամը կատարելու նպատակով արևմտյան ասպետները զգեստավորվում էին բոսորագույն քիկնոցներով, որոնց վրա ասեղնագործված սալխակ խաչերը խորհրդանշում էին Քրիստոսի զործին գոհարներն ու նրանց պատրաստակամությունը: Պատերազմի մյուս խորհրդանիշը նրա մարտակոչ-նշանաբանն էր, որն արտացոլում էր շարժման գաղափարախոսական հիմնավորվածությունը՝ «Աստված է և յոյպես կամենում»: Ավետարանչական և հին կտակարանային սկզբունքների հմուտ գուգակցումը իրականացվում էր հավատի նուրբ հոգեբանական խնդիրների արծարծմամբ: Թշնամիներին և ուրացողներին խառտրեն պատժող, անարկու Եհովա-Ձորաց Տերը (Sabaoth Dominus) լրացվում է եղբայրներին կյանքը

նվիրաբերող, սիրտ անունից հանդես եկող Փրկիչի բարեգութ կերպարով:

6. Կլերմոնյան ժողովից հետո խաչակրաց շարժման նպատակների և ծրագրերի ժողովրդականացումը, դրանց հետագա քննարկումները վաղախոսությունների հանգեցրեցին նրա զաղափարական և սոցիալական շեշտադրումներում: Անդրծովյան արշավանքի հրապարակային քարտզիչներից ամենահռչակավորը Պետրոս Անապատականն էր: Տեսիլքների մեկնաբանությունների միջոցով, իր քարտզներում Պետրոսը հիմնական շեշտը դնում էր Երուսաղեմ ուղևորվող ուխտագնացությունն ապահովելու, Սուրբ վայրեր ազատագրելու խնդիրների վրա: Չհակասելով խաչակրաց շարժման նախնական տրամաբանությանը, դեպի Արևելք շարժվելու անհրաժեշտության նմանօրինակ հիմնավորումները միայն հարստացնում և զարգացնում էին նրա բովանդակությունը, անշրջելի բնույթ հաղորդելով Գրիգորիոս VII -ի ծրագրի իրականացմանը:

ՈՍԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ (ԱԻ)

*ԿԱՊՈՒՅՏԻ ՍԻՄՎՈԼԻԿԱՆ
ԵՋՂԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

Եզդիականության՝ այս չափազանց հետաքրքիր ներփակ (էզոտերիկ) դավանական ուղղության ծխա-հավատալիքային բազմաթիվ հանգուցային կողմեր ցարդ մնում են չուսումնասիրված:

Այս հսկազամանքը պայմանավորված է նաև նրանով, որ կենտրոնացված և համակարգիչ դեր կատարող եկեղեցու ինստիտուտից դուրի ցանկացած այլ կրոնա-դավանական համակարգի նման, եզդիականությունը ևս բնորոշ են հատակ դոգմատիկայի, կանոնակարգված և համընդհանուր պաշտամունքային արարողակարգի բացակայությունը կամ սրանց ժողովրդական՝ շատ դեպքերում բյուր մեկնաբանությունները: Այս առումով չափազանց կարևորվում է եզդիականության մեջ կրոնական այլ ուղղությունների՝ քրիստոնեության, ուղղափառ շիիզմի, ծայրահեղ շիական աղանդների և հատկապես մանիեդական միստիկ (սուֆիական) հոսանքների

անմիջական ազդեցությամբ ի հայտ եկած բազմաթիվ ծխա-
հավատալիքային շերտերի համեմատական վերլուծությունը:

Եզդիականությունը՝ ձևավորվելով միջնադարյան *‘աղավիշյա*
սուֆիական միաբանության (օրդեն) առանցքի շուրջ՝ արդեն իր վրա կրում
էր սուֆիական խոր ազդեցություն (եթե չասենք հազեցած էր դրանով): Մրա
անժխտելի վկայությունն է հանդիսանում սիրամարգի (*տավթու-ե մայաթ*)
պաշտամունքը, «սաստանայի» գաղափարի միտոլիկ ըմբռնումը, գույների
սիմվոլիկան, մոզական շրջանի խորհուրդը և այլն:

Եզդիների շրջանում ընդունված ավանդույթի համաձայն, այս
դավանանքի հետևորդները իրավունք չունեն կրելու կապույտ հագուստ:
Բանավոր այս ավանդույթը, փաստորեն, առաջին անգամ գրավոր
հիշատակվել է 1873թ. եզդի հոգևորականության կողմից Բարձր Դռանը
ռադկած դիմում-խնդրագրում, որի 12-րդ հոդվածում նշվում է. *«Մեզանում
արգելվում է կապույտ հագուստը»*: Կապույտի արգելքի մասին եզդիների մեջ
տարածված ժողովրդական զանազան մեկնաբանությունները, սպառիչ
պատասխան չեն տալիս այս հետաքրքիր սովորույթի առաջացման
պատճառների մասին և միայն սուֆիական ծխա-պաշտամունքային
համակարգի հետ սերտ կապով է, որ կարելի է բացատրել տվյալ երևույթը:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ԱԻ - ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ
ԵՊՀ - Երևանի պետական համալսարան
ԻԿԿ - Իրանագիտության կովկասյան կենտրոն
ԼԻ - ՀՀ ԳԱԱ Լեզվաբանության ինստիտուտ
ՀԱԻ - ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՄԻ - Հայկական մանկավարժական ինստիտուտ
ՊԻ - ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
ՕԼԻ - Բրյուսովի անվ. Օտար լեզուների ինստիտուտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ն.

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԽՆԴԻՐԸ

ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ

ԱՐԱԲԱ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ

ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1

ԱՆՏՈՆՅԱՆ ՅՈՒ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐՔԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ՈՐՈՇ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ

ՄՈՏԻՎՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2

ԲԱԼՅԱՆ Վ.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՈԴԵՌՆԻԶԱՅՄԱՆ

ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈՐՉԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4

ԲՈԲՈԽՅԱՆ Ա.

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԾՈՓՔՈՒՄ

Մ.Թ.Ա. 3-ՐԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՎԵՐՋՈՒՄ

6

ԲՈՅԱՋՅԱՆ Վ.

ԲԵԼՈՒՋԵՐԵՆԻ ԼԵՋՎԱԿԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ

ԲԱՐՔԱՌԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ

8

ԴԱԼԱԼՅԱՆ Տ.

ՍԱԹԱՆԱՅԻ (ՍԱԹԵՆԻԿԻ) ԴԻՅԱՐԱՆԱԿԱՆ

ԿԵՐՊԱՐԸ ԵՎ ՆՐԱ ՋՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ

ՀԱՐԵՎԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄՈՏ

11

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ Դ.

ԱՖՂԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ

ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ

ՆԱԽԱԳՐՅԱԼՆԵՐԻ ՇՈՒՐՋ

13

ԿՈՍՏԻԿՅԱՆ Զ.

XIX ԴԱՐԻ ՌՈՒՄ-ՊԱՐՄԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՐՋԱ ՅՈՒՍՈՒՖ ՆԵՐՍԵՍՈՎԻ

«ԹԱՐԻԽ-Ե ՍԱՖԻ» ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՈՒՄ

14

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

1919Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ

ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐԻ ՇՈՒՐՋ

16

ՀԱՄԱԲԱՐՉՈՒՄՅԱՆ Ա.

ԱՐՔԱՅԻՅ ԱՐՔԱ ՋԱՐԵՀԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ

ԵՎ ՀԱՐԱԿԻՅ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐԻ ՄԱՍԻՆ

(Մի բացառիկ դրամամմուշի առիթով)

18

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ա.

ԱՐԱՐՆԵՐԸ ԵՎ 1915Թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

20

ՂԱՄԲԱՐՅԱՆ Ա.

ԱՆԳԼԻԱՅԻ ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ

ԽՆԴՐՈՒՄ 1913Թ. ԱՄՈՍՆԸ

22

ՂԼԵՉՅԱՆ Գ.

ՂՈՒԿԱՍ ԻՆՃԻՃՅԱՆԻ ՊԱՏՄԱՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ

ՀԻՄՆԱՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ

24

ՂՈՒԼՅԱՆ ՅՈՒ.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՆԹՈՒՐՔԻՉՄԻ

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽՈՒՄ

1918-1920ԹԹ.

26

ՄԱԼՈՅԱՆ Ա.

Գ.-Ա.ՕԼԻՎԻԵԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ 28

ՄԱՐՈՒԹՅԱՆ Ա.

ՄՈՍԿՎԱ-ԵՐԵՎԱՆ-ԹԵՀՐԱՆ ԱՌԱՆՅՔԸ ՈՐՊԵՍ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ 29

ՄՈՎՍԻՍՅԱՆ Ա.

ԲԻԱՅՆԻԼԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ
ՍԿՋՔՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ 30

ՄԵԼՔՈՆՅԱՆ Ջ.

ԲԱՌԱՔԱՐԴՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ
ԵՎ ԹՈՒՐԹԵՐԵՆՈՒՄ
(Զուգորդական վերլուծության փորձ) 32

ՄՈՒՇԵՂՅԱՆ Ա.

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԴԻՅԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ 33

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Տ.

ՄՏՐՈՒԿ-ՎԱՐՉԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՀԱՄՏԱՏՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ
IX-XI ԳԴ. 35

ՌԱՄԱՁՅԱՆ Ս.

«ԶՅՈՌՕՂԼԻ» ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԷՊՈՍԸ

ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

38

ԹՈԽԱԹՅԱՆ Կ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԱՅՈՒՅՅՆԵՐԸ

ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՏՈՄԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

40

ՍԱՐԳՍՅԱՆ Ա.

«ԱՐՈՒԲԱՆԻ» ԴԻՅԱՆՎԱՆ

ՍՏՈՒԳԱՔԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՉ

43

ՎԻՐԱԲՅԱՆ Դ.

ՊԱՐՄԻՅ ԾՈՅԻ ՃԳՆԱԺԱՄԸ

44

ՊԵՏՐՈՍՅԱՆ Վ.

ՄՈՍՈՒԼԻ ԽՆԴՐԻ

ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՅՄԱՆ ՓՈՐՉԵՐԸ (1926-1998 թթ.)

46

ԱՌԱՔԵԼՅԱՆ Ա.

ԱՐԱՔԱԿԱՆ ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ

ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻՆ ՎԵՐԱՔԵՐՈՂ

ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐԻ ՄԱՍԻՆ

49

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ե.

ՀԱՄԱԵԽԱՐՀԱՅԻՆ ՋՐՀԵՂԵՂԻ ԱՌԱՄՊԵԼԸ

ԸՍՏ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԵՎ ՂՈՒՐԱՆԻ

52

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Մ.

ՆԱԽԻՋԵՎԱՆ ԳԱՎԱՌԸ IX-Xդդ.

/ըստ արաբական աղբյուրների/

53

ԳԵՎՈՐԳՅԱՆ Վ.

ԽԱՉԱԿՐԱՅ ՇԱՐԺՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

ԳԱՂԱԹԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

55

ՈՍԿԱՆՅԱՆ Վ.

ԿԱՊՈՒՅՏԻ ՄԻՄՎՈԼԻԿԱՆ

ԵԶԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

57

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

58

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝

Ա.Ե.ՄՈՎՍԻՍՅԱՆ



Մեկնասությամբ
Արմեն և Բերսաբե Ճերեճեան Հիմնադրամի
ԱՄՆ

This Publication was made possible by
Armen and Bersabe Jerejian Foundation Inc.

USA

ՀԱՍ Ֆինանսարար Գիտ. Գրադ.



FL0600265

[20047]

A $\frac{11}{84821}$